

91(91.542)  
Q-14

1

91(47.925)  
Q-13



91(91.542)

6-14

ԱՐՑԱԽԻ ԱԲԵՂԵԾՆ

# ՀԱՅՐԵՆԱԳԻՏՈՒԹԵԱՆ

## ՈՒՍՈՒՑՈՒՄԸ

Համառոտ ուղեցոյց դասասուների համար

ԳԻՆԻ Է 20 ԿՐՊ.



ԹՐԱՆԻՄ

Տպարան «ԿՈՒԼՏՈՒՐԱ» Հնկ. | Типогр.Т-ва «КУЛЬТУРА»

Եզնիկովսկայ, 18.

1910

21038

~~2. G. P.~~ 225  
 13  
~~370~~  
 1845-ԿԲ  
 7/11-1922  
 Ա. ԱՅԱՍԻԿՅԱՆԻ ԱՎԱՐ  
 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ  
 Ա. Մանուկյան  
 296

# ՀԱՅՐԵՆԱԳԻՏՈՒԹԵԱՆ

91(47. 925) ՈՒՍՈՒՑՈՒՄԸ

Հ-13

Ուղեցոյց գաստառների համար

Հ 0 0 3  
Հ 0 0 2  
Հ 0 0 1

Կազմեց

ԱՐՏԱՇԵՍ ԱԲԵՂԵԱՆ



(Արտատապած շնոր Գալլոց կողմանց)

— 3 —

ԹԲՎԱՐ

Տպարան «ԿՈՒԼՏՈՒՐԱ» Բնկ. | Տիոգր. Տ-վա «ԿՈՒԼՏՈՒՐԱ»  
 Վելյամինովսկայ, 18.

1910

21038

.01. 2013



## Բ Ա Վ Ա Կ Ս Ա Կ Ո Ւ Խ Թ Ի Խ Ա Կ

### Յառաջարան

Երևան  
5—6

I. Հայրենազիտութեան ստուգման պատմական  
զարգացմամբ. Կոմինիուս:—Ճ. Ճ. Խուսուն  
ֆիլանտրոպներ:—Պեստալոցին և նրա հե-  
տևողները:—Կ. Ռիտաներ:—Քծագբական մե-  
թոդ:—Դիտողական մեթոդ:—Համեմատա-  
կան մեթոդ:—Նորագոյն շրջան:—Հայերէն  
հրատարակութիւններ, . . . . .

6—14

II. Հայրենազիտութեան սահմանները. Հայրե-  
նազիտութեան, իրրե առանձին առարկայի,  
անհրաժեշտութիւնը:—Նիւթը նպատակա-  
յարմար ձևով հաւաքել և մշակել:—Հայրե-  
նազիտութեան նորատարակը:—Հայրենազիտու-  
թիւն կազմ ուրիշ առարկանների հետ:—Ինչ  
որէաք է հասկանալ «Հայրենիք» ասելով:—  
Հայրենազիտութեան ծաւալը: . . . . .

14—26

III. Ուսուցման եղանակը. Նիւթի ընտրութիւնը  
և դասաւորումը:—Դիտողութիւնը՝ իրրե  
հիմք ուսուցման:—Կարծիքներ:—Դպրոցական  
շրջագայութիւններ:—Պատճառական կազ:—  
Օժանդակ միջոցներ: . . . . .

26—33

IV. Բացատրութիւններ. Բնակավայր:—Բնակա-  
վայրի շրջակայքը:—Բնագաւառ:—Երկինքը  
զիտելը: . . . . .

33—39

V. Հայրենազիտութեան ծրագիրը. (Եախազիծ)

39—43

2433-91

13-99

## ՀԱՅՐԵՆԱԳԻՏՈՒԹԵԱՆ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ

Յ Ա. Ռ Ա. Զ Ա. Բ Ա. Ն

Մեր ծխական գպրոցների ծրագրի մէջ իր որոշ տեղը ունի հայրենագիտութիւնը. Այդ ծրագրի մէջ հայրենագիտութիւնը չէ յիշւած իրքե անկախ առարկայ, այլ՝ իրքե աշխարհագրութեան առաջին գասընթաց, որ պիտի աւանդուի գպրոցական երրորդ տարւայ ընթացքում:

Մակայն հայրենագիտութիւնն ես, Ծրագրի մէջ տեղ զտած մի քանի ուրիշ առարկաների նման, արժանի ուշագրութեան չէ առնել մեղնում: Իրքե իրողութիւն պիտի յիշատակել այստեղ, որ շատ գպրոցներում բնաւ չէ աւանդում այդ առարկան. Յ-րդ կամ 4-րդ բաժանմունքից սկսում են ուղղակի աշխարհագրութեան զառսատութիւնը: Անշուշա այս հանգամանքը զասատուների սոսկ քմահաճոյքով բացատրել պէտք չէ և կարելի չէ: Ամենագլխաւոր պատճառը, մեր կարծիքով, այն է, որ հայրենագիտութիւնը իրքե գործ, առարկայ իր առանձնայատուկ դժւարութիւններն ունի, որոնց յաղթահարել անկարող են մեր ուսուցիչներից շատ-շատերը: Հայրենագիտութեան զասատուից պահանջւում է առանձին աշխատանք, հիմնաւոր ծանօթութիւն աշակերանների բնակավայրի հետ: Իսկ այս անհրաժեշտ պայմանի իրականացումը համարեա անկարելիութիւն է մանաւանդ մեր զպրոցական ներկայ պամաններում, մեր ուսուցիչների մնեց մասը ամեն տարի փոխում է իր պաշտօնավայրը. «ուսուցչական գաղթը» մեր ժամանակակից զպրոցական վէրքերի թուում գուցէ ամենացաւուն է. Բնչուկները մշտապէս գաղթող ուսուցչից պահանջնել, որ նա հիմնապէս ծանօթանայ մի վայրի հետ և զասատութեան առարկայ գարձնէ այն:

Մինչ միւս առարկաների համար կան զասագրքեր, որոնք ուսուցչին որոշ օժանդակցւթիւն են ցոյց տալիս զասատութեան ընթացքում, այդ միջոցից էլ զուրկ է հայրենագիտութեան ուսուցիչը: Մշակել հայրենագիտութեան ձեռնարկ բոլոր վայրերի համար և ամբողջացրած մասերով՝ համարեա անկարելիութիւն է: Դասագիրք լինելու գէպքում իսկ ուսուցիչը ինքը պիտի ահազին աշխատանք թափէ, լրացնէ հայրենագիտութեան զասին անցնելի

այս նիւթերը, որոնք յատուկ են բնակավայրին, շրջապատին: Մի խօսքով՝ ուսուցիչը պիտի որոշ չափով յանձն առնէ դասաղիրք կազմողի դերը. իսկ միթէ դիւրին զործ է այդ:

Կայ նաև այս հանգամանքը, որ տեսական մանկավարժութեան, յատկապէս առարկաների մեթոդիկաներին միանգամայն աճանոթ մեր ուսուցիչները անպատճառ են ինքնուրոյն աշխատանքի, նրանք չեն կարող իրենք իրենց զեկուլարել: Միւս առարկաների վերաբերմամբ ուսուցիչները մեր չափազանց աղքատիկ մանկավարժական զրականութեան մէջ գուցէ գտնին ցուցումներ, իսկ հայրենագիտութեան վերաբերմամբ՝ ամէնին:

Ահա այս կարեռը պակասը գոնէ մասամբ լրացնելու, հայրենագիտութեան գաստուուներին իրենց ծանր, պատասխանառու գործում գոնէ փոքր չափով օգնութիւն հասցրած լինելու նպատակով է, որ ձևանարկում են զրելու յետագայ տողերը:

Մենք օգտուում ենք զերմանական միքանի յայտնի աշխատութիւններից. Դրանք են. 1) Adolf Tromnau: Der Unterricht in der Heimatkunde, Halle 1901. 2) Robert Strickler, Der Unterricht in der Heimatkunde. 3) Hans Trunk, Die Anschaulichkeit des Geographischen Unterrichts. 4) Otto Kronwald, Der Unterricht in der Heimatkunde, Dorpat 1867. 5) Jüttig und Weber, Anschauungsunterricht und Heimatkunde, 7 Aufl. 1909. 6) Didaktik und Methodik des Geographic-Unterrichts, von Alfred Kirchhof, 7) Fr. Einger, Anweisung zum Unterricht in der Heimatkunde. նույն 8) Թ. Յ. Պետրի, մեջ և պատմութեան գործառնութեան մասին մասնաշել բնութիւնը, և 9) A. Соколовъ, очерк методики и дидактики учебной географии.

## I. ՀԱՅՐԵՆԱԳԻՏՈՒԹԵԱՆ ՋԻՍԱԽԵՑՄԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ԶԱՐԳԱՅՈՒՄՆԵՐԸ

Կոմինիուս:—Ժ. Ժուսո և Փիլանտրոպներ. —Պիստարոցին և նրա հետեղները:—Կ. Ռիտահր: —Գծագրական մեթոդ: —Դիտուական մեթոդ. —Համեմատական մեթոդ. Նորագոյն շրջան: —Հայերէն հրատարակութիւններ:

Դալլոցական առարկաների թուում հազիւ թէ զանուի մի ուրիշը, որի վերաբերմամբ կազմիքների այնչափ առարբերութիւն, երբեմն նոյն իսկ ներհակութիւն նկատուի, որչափ հայրենագիտութեան վերաբերմամբ, —չնայելով որ մեր օրերում համարեաբուր թէորետիկների կողմից ճանաչւել է այդ առարկայի կարեռու-

թիւնը և նշանակութիւնը: Խրատական է ուստի մի պատմակա: ակնարկ ձգել այդ առարկայի գասաւանդման պատմութեան վրայն Հայրենագիտութիւնը սերտ կերպով կապւած է աշխարհագրութեան գրութեան հետ. շատերի կողմից և իրաւամբ նա համարւում է վերջինը նախապատրաստող առարկայ: Բնական է ուրեմն տեսնել որ հարենագիտութեան, իրեւ զպրոցական մի առարկայի, զարգացումը ամենասերտ կերպով կապւած է աշխարհագրութեան զարգացման հետ:

Մինչ պատմութիւնը, ընագիտութիւնը և միւս ըէալիստական առարկաները համեմատարար վաղ ժամանակներում ուղի հարթեցին իրենց առաջ և զպրոցական առարկաների շարքը մտան, նոյն բախտին չարժանացաւ աշխարհագրութիւնը: Կոպենհագուսից և 15-րդ ու 16-րդ դարերի յայտնի գիւտերից յետոյ միայն հետպհակէ հետաքրքրութիւն զարթնեց գէպի աշխարհագրական հաբցեր: Սակայն այն ժամանակների զպրոցում ամրոջ զասաւութեան կենտրոնը կազմում էին լեզուները և կրօնական առարկանները. խօսք անգամ լինել չեր կարող աշխարհագրութեան իրեւ զպրոցական առարկայի մասին:

Բեկունն էր, բէալիզմի նախակարապետը, որ պայքար մղեց զպրոցներում իշխող սքուլաստիք ուղղութեան գէմ և դասաւանդութեան առաջ նոր ուղի հարթեց. «Բաց արէք աշքներդ», տուում է նա, «սովորեցէք ճանաչել բնութիւնը, և դուք կտիւագիտէք նրան»:

«Բէալիստական դասաւանդմոն հօր» այդ պահանջը ուշադրութեան առաջ նախ և առաջ կոմինիուսը, «ժամանակարժեամբ մարգարէն», որ տեսականորէն օգտագործեց Բեկոնի հայեացքները:

Կոմինիուսը առաջին անգամ պարզեց հայրենագիտութեան առարկան, որոշեց նրա տեղը դպր. միւս առարկաների թուում, շեշտելով. «Աշխարհագրութիւնը պիտի սկսի սենեակի, բակի, փողոցների և գաշտերի ծանօթութեամբ: Երեխաները նախ և առաջ պիտի սովորեն հասկանալ, թէ ինչ է սարը, հովիտը, արտը, գետը, զիւղը կամ քաղաքը»:

Սակայն Կոմինիուսի այս սկզբունքը մնաց իրեւ տեսութիւն միայն. զպրոցը դեռ հեռու էր այդ սկզբունքը իր կեանքում իրագործելուց:

Ժ. Ժուսուն և միւսը ֆիլանտրոպները նոր, թարմ հոսանք մացրին մանկավարժութեան մէջ. նրանք պահանջում էին մանկան բնական գաստիարակութիւն: Աշխարհագրութեան վերաբերմամբ նրանց ծառայութիւնը եղաւ այն, որ հիմք զրին համագրական գաստանդութեան: Նրանք պահանջում էին, որ հայրե-

նագիտութիւնը ուսուցչի իրրե նախաշաւիդ աշխարհագրութեան. և նրանք իրագործեցին այդ պահանջը՝ իրենց սեփական կրթարաններում:

Ռուսոսն բողոքում էր աշխարհագրութեան ուսուցման այն եղանակի դէմ, որով ամեն մի ծանօթութիւն աշակերտը ձեռք է բերում գրերից: «Ես կարգացել եմ» — ասում է Ռուսոսն — «մի աշխ. դասագիրք, որ սկսում է այս կերպ. «Ե՞նչ է երկիրը. — խաւաքարտից շինած մի գունդ»:

«Դուք ուզում էք երեխանակին աշխարհագրութիւն սովորեցնել և նրանց ցոյց էք տալիս գլորուսներ ու քարտէններ. ինչու չէք սկսում նրանով, որ ցոյց տաք հէնց առարկան, որ աշակերտը տեսնէ գոնէ, թէ դուք ինչի մասին էք խօսում նրա հետ: Առարկաներ, առարկաններ. միշտ կրկնել պէտք է, որ մենք բառերին շատ մեծ նշանակութիւն են տալիս. մեր շատախոս դաստիարակութեամբ պատրաստում ենք շատախոսներ միայն», — բացականչում է դարձեալ Ռուսոսն:

Գերժանական ֆիլանտրոպաներից Զալցմանն էր առաջինը, որ Ռուսոսի հետեւթիւնը զպրոցական կեանքում իրագործեց: Այդ ժամանակներից ահա հայրենագիտութիւնը հետզհետէ գրաւել սկսեց իրեն արժանի տեղը զպրոցական առարկաների շարքում:

Սակայն Պետալոցցին և նրա հետեւրդներն էին, որ վերջնականապէս և զրակարապէս լուծեցին այս հարցը՝ հայրենագիտութիւնը ունի՞ դրոյնթիւն իրաւունք, թէ ոչ: Քանի որ ըստ Պետալոցը ամեն մի առարկայի ուսուցման համար հանաչողութեան հիմքը կազմում է «գիտողական սկզբունքը», ուստի և բնական է, որ աշխարհագրութեան դասաւանդման համար ճշգրիտ ընկունեց «մօտիկից զէպի հետո» անսակէալ: «Աշխարհագրութեան ուսուցումը սկսում է շրջապատը դիտելոց և ըմբռնելոց»:

Պետալոցը հետեւղներից հայրենագիտութեան վերաբերմամբ առանձին ծառայութիւն է մատուցել Պիստերվլով: Նա իրաւամբ նկատում է, որ անտեղի է այն պատճառաբանութիւնը, թէ երեխանակին արդէն յայտնի է շատ բան հայրենագիտութիւնից. «Մարդկութեան մեծամասնութիւնը մնում է յաճախ անհասկանալի չափով անծանօթ իր մօտակայ շրջապատի վերաբերմամբ: Սկսել մօտիկից և հետզհետէ զէպի հետու դիմել — ահա նաև նրա պահանջը: Դիստերվէզը առաջարրում է մի նոր պահանջ ևս — ուսուցիչը էքսկուրսիաների միջոցով պիտի բնոլայնէ աշակերտների աշխարհագրական հասկացողութիւնները:

Սակայն ինչպէս աշխարհագրութեան, այնպէս նաև հայրե-

նագիտութեան մեթոդական հիմնաւորումը և դարգացումը վերապահւած էր նոր ժամանակներին:

Կարլ Ռիտտենը \*) էր, որ հիմք դրեց համեմատական աշխարհագրութեան, որի մեթոդական ուսուցման իրութիւնների համար նրան առաջ նիւթ մատակարարեցին յայտնի Ալեքսանդր Փոն Հումբուլի գիտական աշխատաւթիւնները:

Ռիտտերից առաջ աշխարհագրութեան դասաւանդութիւնը երկու աչքի ընկնող պակասութիւն տնէր: 1) բնական աշխարհագրութիւնը անտես էր արւած և չափից աւելի շիշտած քաղաքական-վիճակագրական տեսակէտը, 2) աշխարհագրական երկոյթների նկարագրութիւնները շարում էին կողք-կողքի՝ առանց նիրքին կապ ունինալու: Կ. Ռիտտերն էր, որ հիմնովին նոր տեսակէտ մտցրեց աշխարհագրութեան դասաւանդութիւնն մէջ և յիրաւի խոշոր բարենորոգիչ հանդիսացաւ. այս ասպարէզում: «Մեր երկիրը և նրա բնակիչները ամենասերտ փոխազգեցութեան մէջ են զբանւում», ասում է Ռիտտէրը: Երկիրը ազգում է մարդկանց վրայ, այդ պատճառով բնական աշխարհագրութիւնը հիմն է աշխարհագրութեան ընդհանրապէս: «Բնական մեթոդը այն է, որ ուսուցումը սկսում է այնտեղից, որտեղ երեխան է ապրում և դիտում: ոչ թէ սենհակում, ոչ թէ քարտէսի և զրբի միջոցով պիտի սովորեցնել, այլ ընտութեան մէջ»: Այդպիսով աշխարհագրութեան ուսուցման կակէտը ոչ թէ երկրագունդն է, այլ հայրենիքը՝ նեղ մաքով:

Պէտք է շիշտել այստեղ նաև մեթոդական մի ուրիշ ուղղութեան վրայ. զա գծագրական ուղղութիւն է. քարտէս գծագրելը որոշ թէ սուբյեկտիվ կողմից համարւեց իրեն առարկայի դասաւանդման անհրաժեշտ մասը. ոմանք այդ բանին տեին նոյն իսկ առաջնակարգ տեղը:

Վերոյիշնալ տողերից նկատելի է, որ հայրենագիտութեան դասաւանդութեան զարգացման համար մեր ժամանակներում՝ գլխաւորապէս երեք ֆակուլտետ են գեր խաղացել: 1) Պետալոցը և նրա հետեւրդների պահանջը — դիտողական սկզբունքի կիրառութիւնը գտաւանդութեան մէջ, 2) Ռիտտերեանների պահանջը — համեմատական աշխարհագրութեան սկզբունքը, 3) աշխարհագրական գծագրութեան սկզբունքը:

Պետալոցը դիտողական սկզբունքը ուսուցման մէջ ընդ-

\*) Ռ.-ը ծնւել է 1779 թւին, 1819 թւականից սկսած մինչև մահւան տարին, 1859 թ., նա եղել է աշխարհ. պրոֆեսոր Բերեկինի համալսարանում:

հանրապէս՝ ծնունդ տւառ շուտով դպրոցական մի նոր առարկայի, դիտողական ուսումը, կամ. ինչպէս սովոր ենք մենք կոչել, իրաւունութիւնն է (Anschauungsunterricht) այդ:

Եւ որովհետեւ ըստ Պետական դպրոցական մի նոր առարկայի, ձանաչողութեան հիմքն է», ուստի և այդ ուղղութեան հետեւողները դիտողական ուսումը կամ իրավնութիւնը համարեցին նախաշափեց կամ «հիմնական առարկան» միացած բոլոր առարկաների վերաբերմամբ եւ քանի որ դպրոցական զանազան առարկաների ասարերքը, որոնց թւում նաև աշխարհագրութեան առարերքը՝ հայրենագիտութիւնը՝ իրավնութիւնը համարեցին մէջ պիտի որոնել ուստի և բնական է, ինչպէս եղանակացնում են դիտողական սկզբունքի հետևողները, աւելորդ է հայրենագիտութիւնը աւանդի դպրոցում իրեն առանձին, անկախ առարկայ. չչ որ իրավնութեան մէջ արդէն իսկ երեխաները ծանօթանում են հայրենագիտութեան նիւթի հետ: Եւ իսկապէս: Այս ուղղութեան հետևողները իրավնութիւնը դասերին անցնում են նաև հայրենագիտութեան նիւթերը—դասարան, ուսումնարան, հայրական տուն, գիւղ կամ քաղաք, այգի, անտառ, բլուր, սար, հովիտ գետ, ամպ, արեգակ, լուսին, անտուն և այլն. ուստի և շատերը իրավնութիւնը և հայրենագիտութիւնը նոյնացնում են:

Այս ուղղութեան հետևողների մէջ առաջին տեղը բանում է Ֆինգերը, որի երկասիրութիւնը՝ յիշատակեցինք յառաջարանի մէջ: Ֆինգերը հայրենագիտութիւնը համարում է իրեն «մի մաս իրավնութեան»: Եւ բնական է, որ այդ գէպքում առարկան պիտի սկսվի դպրոցական առաջին արդիութեանից արդէն և տեր 3—4 տարի: Դիտողական սկզբունքն է իշխում դասաւանդութեան մէջ: «Պէտք է սովորեցնել երեխաներին դիտել, համեմատել, կարգուրել և արտայայտել միտքը»:

Դիտողական սկզբունքի կողմակից են ժամանակակից մանկավարժներից նաև Ռայնը և ընկերները՝ Schulahre-ի հեղինակները: Հայրենագիտական գաղափարները երեխաները իրացնում են Ռոբինզոնի պատմութիւնից և 12 հէքիաթից վերցրած նիւթերի իիջոցով, որ անցնում են իրավնութեան դասերին:

Պարզ է ուրեմն, որ դիտողական սկզբունքի կողմակիցները, ժխտելով հայրենագիտութեան իրեն դպրոցական առանձին առարկայի անհրաժեշտութիւնը՝ չեն ընդունում նաև այն սկզբունքը, որի համաձայն հայրենագիտութիւնը աշխարհագրութեան նախապատրաստական աստիճանը պիտի լինի:

Ամփոփենք այս տեսակէտի էական կողմերը. 1) «Հայրենիք» ասելով հասկանում են բնակավայրը և մերձակայ շրջապատը

միայն, ուր իսկապէս գիտողութիւններ անել հնարաւոր է. 2) Հայրենագիտութիւնը իրազննութեան մի մասն է միայն. 3) Ուսուցումը հիմնում է դիտողութեան վրայ. համեմատական աշխարհագրութեան սկզբունքն անտես է արւում: 4) Քարտէս զծագրելը չափաւոր կերպով դորձագրում է:

Գծագրական մէկնողի կողմակիցները ծայրայեղութեան մէջ ընկան. հայրենագիտութեան գասաւամութեան կննտունը նրանք դարձրին քարտէսի գծագրութիւնը. նրանք պահանջում էին աշակերտներից գծագրել ճիշտ քարտէսներ: Ծառ հասկանալի է, որ այս ծայրայեղութիւնը միանգամայն անթոյլատրելի է մանաւանդ ժողովրդական դպրոցում, ուր շաբաթական երկու ժամ է յատկացրած հայրենագիտութեան և որոնկ քարտէսի գծագրութիւնը կապւած է այլ և այլ զժւարութիւնների հետ. ուստի և մինիմումի պիտի հասցնել այն, մանաւանդ ի նկատի ունենալով, որ հայրենագիտութեան ուսուցման օժանդակ միջոցներ ներկայումս բաւականաչափ կան:

Գծագրական մէթոդի կողմակիցների մի կարևոր ծառայութիւնը այն է սակայն, որ նրանք չեն համարում հայրենագիտութիւնը իրեն մի մասն իրավնութեան, այլ՝ իրեն առանձին առարկայ և առաջին աստիճանն աշխարհագրութեան ուսուցման: Այսպիսով հայրենագիտութիւնը ստացաւ դպրոցական առարկաների թւում իրեն ալժանի և անկախ տեղը. այս տեսակէտն է այժմ գերիշխողը:

Գծագրական մէթոդի կողմակիցների շնորհիւ ուրեմն 1) հայրենագիտութեան ծաւալը աւելի ընդարձակւեց, քան ընդունում են դիտողական սկզբունքի կողմակիցները. 2) Նրանք հայրենագիտութիւնը համարում են իրեն առաջին աստիճան աշխարհագրութեան:

Յիշած երկու ուղղութիւնների հետ համեմատած շատ աւելի մէծ է համեմատական մէթոդի կողմակիցների ծառայութիւնը հայրենագիտութեան զարգացման գործում:

Հայրենագիտութեան գամերին մանաւանդ աշակերտը պիտի գիտէ անձամբ և սովորէ այն ներքին կազը, որ կայ իր ծննդավայրի ընութեան և ազգարհակութեան կեանքի մէջ: Ինչնու է գետակը հոսում հէնց այս և ոչ թէ այն կողմ, ինչնու է նա գարնալը զուրս զալիս ափերից, չորանում՝ ամառը, և այլն—այս հարցերին, ներքին կապակցութեամբ, պիտի սովորէ պատասխանել աշակերտը՝ անձնական դիտողութեան վրայ հիմնելով, իր հայրենի շրջապատի կեանքից օրինակներ վերցնելով:

Աշխարհագրութեան դասաւանդման համար համեմատութիւ-

նը, երեսոյթների պատճառական կապի բացատրութիւնը մեծ նշանակութիւն ունի, համեմատութիւնը զարթեցնում է հետաքրքրութեան, աշակերտի մէջ և սովորեցնում է ինքնուրոյն մասձողութիւն, նա ազատազրում է առարկայի դասաւանդութիւնը սոսկ յիշողութեան աշխատանքի կապանքներից և զարդացնող մասւոր աշխատանք է առաջ բերում:

Այս ուղղութեան նշանաւոր կողմանկիցներից մէկը, Տրունկը, ասում է. «Եշակերտները պէտք է հէնց այս շրջանում սովորեն դիտել աշխարհազրական երեսոյթների պատճառական կապը և իրենց բոլոր ծանօթութիւնները դիտողութեան ճանապարհով ձեռք բերեն, լնդիանրապէս հայրենազիտութեան դասաւանդութիւնը աշակերտների մէջ պիտի առաջ բերի մեծ չափով ինքնազործունէութիւն»:

Մենք տեսնում ենք, այսպիսով, որ այս ուղղութեան կողմանկիցները ոչ միայն մտցնում են նոր՝ համեմատական տեսակետը, որ առարկային տալիս է կինդանութիւն և հետաքրքրութիւն, այլ և այն, որ նրանք ընդունում են նաև դիտողական սկզբունքը, թէ հայրենազիտութեան ուսուցման հիմքը կազմում են երիտաների անձնական դիտողութիւնները, առանց սակայն միակողմանիութեան մէջ ընկնելու և հայրենազիտութեան զերը իջեցնելու մինչ այն աստիճան, որ համարեն այդ առարկան իրազնութեան մի մասը միայն: Գծագրական մեթոդի կողմանկիցների հետ միասին նրանք ևս ընդունում են իրաւամբ, որ հայրենազիտութիւնը աշխարհազրութեան առաջին աստիճանն է, նախապարասատական շրջանը. սակայն քարտէսի գծագրութիւնը նրանք սահմանափակում են, այն չեն դարձնում իրեն ինքնանպատկ, այլ միմիայն՝ միջոց:

Դիտողական և գծագր. սկզբունքներին աւելանում է ուրիմն համեմատական սկզբունքը. այդպիսով հայրենազիտութեան ուսուցումը ժողով. գպրոցում դրւում է ներկայումս այդ երեք սկզբունքների միացման տեսակետի վրայ:

Հայրենազիտութեան դասաւանդութեան վերաբերող նորագոյն աշխատավորենները աւելի ու աւելի շեշտում են այն միաքը, թէ յիշած երեք մեթոդներն են չափաւոր կերպով գործազրւելու իրաւունք ունեն, որ նրանք իրար չեն հակասում, այլ ամրողացնում են: Դժւար թէ գտնել ներկայումս մէկը, որ պարտադիր չհամարի աշխարհազրութեան, մասնաւանդ հայրենազիտութեան դասաւանդման համար Պեստալոցցու սկզբունքը, թէ դիտողութիւնն է հիմքը ամեն տեսակ ճանաչողութեան: Ամենքը համաձայն են նաև այն բանում, որ հայրենազիտութիւնը պիտի սկսուի

անմիջական շրջապատը դիտելով: Բայց միենոյն ժամանակ ներկայումս ընդհանրացած է այն տեսակէտը, թէ հայրենազիտութիւնը պիտի առանձնացնել իրազնութիւնից, թէ նա աւելի բարձր դասընթաց է, քան իրազնութիւնը, կազմում է աշխարհագրութեան նախաշաւելիզը: Եւ ներկայումս, համաձայն այդ սկզբունքի, երոպական գպրոցներից մեծ մասում հայրենազիտութեանը յատկացրւած են առանձին ժամեր՝ Յ-րդ բաժանմունքում. այդպէս է նաև մեզանում: Նաև աշխարհագրութեան կարևորութիւնը, ինարկէ չափաւոր կերպով, ընդունում է և ամենքի կողմից:

Այս պատմական ակնարկի վերջում արժէ մի քանի խօսք ամեր առարկային նորութեած հայրենէն աշխատավորենների մասին:

Ա. Բանավթընեանի «Ողեցոյց հայ ուսուցչի. ընդհանուր մեթոդիկայ և առաջին տարւայ նիւթի մշակութիւնը» աշխատասիրութիւնն է ամենից առաջ յիշատակութեան արժանի, որ լոյս է տեսել 1882 թւականին:

Յայտնի հայ մանկավարժը իր այդ աշխատավորեան մէջ տեղ է տալիս նաև հայրենազիտութեան. սակայն նա այդ առարկան և դիտողական ուսումնը (իրազնութիւնը) նոյնացնում է (երես 54, 79 շար.): Հայրենազիտութեան ուսուցման նիւթ է համարում հեղինակը օր. նաև ձին, շունը կատուն և այն (եր. 56) և այդ նիւթը առնում է հերիաթիւներից: Ակնյայտ է, որ Ա. Բանավթընը հետևում է վերը յիշատակած «գիտողական սկզբունքին», որի կողմանակիցները հայրենազիտութիւնը համարում են մի մասն իրազնութեան:

Ա. Օլդեցեանի կազմած «Նիւթեր մասնաւոր դիտակտիկայի համար» (Աշխարհազրութեան և ընական պատմութեան դասաւանդութեան միթողը) աշխատասիրութեան մէջ թէպէս յատկապէս հայրենազիտութեան ուսուցման մասին խօսք չկայ, բայց աշխարհագրութեան մեթոդիկայից երեսում է, որ մեծ տեղ է տրւում հայրենիքի աշխարհազրութեան. «Ճնդապայրը, հայրենիքը, ժողովուրդը, ազգը կազմում են մանկան հետաքրքրութեան ելակետը և կէտ նոպատակը» (եր. 7),

Յ. Տէր-Միրաքեանի փոխազրած «Ժողովրդական գպրոցի մեթոդիկա» (Մուղէի) աշխատավորեան մէջ, աշխարհազրութեան ուսուցման բաժնում, որոշ տեղ է տրւած հայրենազիտութեան ուսուցման (եր. 44 շար.): Հեղինակը այն ճիշտ կարծիքն ունի, թէ «Աշխարհազրութեան նախաշաւելիզը հայրենազիտութիւնն է: Նախ պէտք է ծննդապայրում ու մօտաւոր հայրենիքում աշխարհատները զննեն շրջապատող աշխարհազրական իրեն ու երեւոյթները»:

Հայրենագիտութեան վերաբերմամբ եղած նորագոյն և ճիշտ տեսակէան ունի նաև մեր դպրոցների «ծրագիրը»:

«Գալով դասազրելին՝ 1883 թվին լոյս է տեսել Աւետիք Տէր-Յակովլիեանի «Հայրենագիտութիւն» կոչւած դասագիրքը: Հեղինակը այդ առարկան համարում է աշխարհագրութեան նաև խաշափիլ: Դասարանից սկսելով՝ նա տալիս է Թիֆլիսի տեղագրութիւնը, ապա գաւառի (Թիֆլիսի), նահանգի տեղագրութիւնը, յետոյ տալիս է Կովկասի, իսկ վերջը՝ Հայաստանի աշխարհագրութիւնը: Անցած թվին լոյս տեսաւ ե. Թաւարբէղեանի կաղմած «Հայրենագիտութիւն» (Կովկաս) ձևանարկը:»

## II. ՀԱՅՐԵՆԱԳԻՏՈՒԹԵԱՆ ՍԱՀՄԱՆԵՐԸ

Հայրենագիտութեան, իրեւ առանձին տուարկայի, անհրաժեշտութիւնը:—Նիւթը նպատակայարմար ձեռք հաւաքել և մշակել:—Հայրենագիտութեան նպատակը:—Հայրենագիտութեան կապը ուրիշ տուարկաների հետ:—Ինչ պէտք է հասկանալ «հայրենիք» տաելով:—Հայրենագիտութեան ծաւալը:

Հայրենագիտութեան ուսուցման պատմական անցեալին նըւիրած հաւածից (գլ. I.) ընթերցողը տեսաւ, որ պարզ է այդ առարկայի կարևորութիւնը:

Կան ներկայումս մանկավարժներ, որոնք ժխտում են հայրենագիտութիւնը իրեւ առանձին առարկայ անցնելու անհրաժեշտութիւնը: Պայողներ կան, թէ աշակերտները առանց հայրենագիտութիւն սովորելու ել աշխարհագրութեան յետապայ դասընթացի համար բաւականաչափ ծանօթութիւններ ըերտում են հետները իշրեաց հոյը բարձապատճեան մասին: Եւ շատ տեղ այդ առարկան չէ աւանդում:

Սակայն միանգամայն սխալ է այդ կարծիքը: Յիշատակենք Դիստերվէզի ճիշտ նկատողութիւնը. «Յայտնի է, որ մարդկանց միծ մասը ապրում է՝ յաճախ անհասկանալի չափ անծանօթ մնալով իր մերձակայ շրջապատի վերաբերմամբ: Զպէտք է կարծել բոլորովին՝ շարունակում է Դիստերվէզը՝ թէ աշակերտները պարզ գաղափար ունեն իրենց շրջապատի մասին: Այս նախապահ միանգամայն սխալը կարծիքէ զույգ դուք 12 տարեկան մի սովորական աշակերտի հարցնել իր շրջապատի փոքր ի շատէ ճիշտ նկարագրութիւնը, և գուշ կհամոզւեք, թէ նրանք որչափ ան-

ճիշտ, թիրի գիտողութիւններ են արել իրենց շրջապատի մասին. կենդանի, ճշգրիտ պատակերացումներ չունեն նրանք իրենց հայրենիքի մասին»:

Անշնուշտ գպրոցական երեխային ծանօթ են իրենց դիւղի տները, փողոցները, արաերը, անտառը, աղբերները և այն: Բայց այդ բոլոր վայրերի մտապատկերները երեխայի գիտակցութեան մէջ չեն կապակցւած իրար հետ, չեն ամբողջացած, այլ մութն են և խառնիխուռն:

Այս մտապատկերները, ուստի, թէ բովանդակութեան և թէ ձիաւորման կողմից պէտք է ուղղել և պարզել, պէտք է ամբողջացնել: Հէնց գպրոցի նպատակն է՝ գպրոց մանող երեխանիւրի՝ բովանդակութեան և ձեի (förm) կողմից աւելի կամ պակաս թիրի պատկերացումները մշակման ենթարկել լրացնել: Այսպիսով ահա, հարենագիտութեան ուսուցումը հետզետէ մշակում է երեխանիւրի աշխարհագրական պատկերացումները, մշակւած և պարզւած պատկերացումները կարգաւորում է և ամբողջացնում. և այսպէս՝ երեխան ձեռք է ըերտում իր հայրենիքի պարզ պատկերը:

Կայ նաև այս կարեսը հանգամանքը: Յաճախ միենոյն, մանաւանդ քաղաքում զանուղ, զպրոցի աշակերտները միենոյն հայրենիքից չեն, միենոյն վայրում չեն անցկացրել իրենց տարիները. հետեւապէս՝ նրանք միենոյն չափով և միենոյն տեսակ աշխարհագրական մտապատկերներով չեն մըտնում գպրոց: Գիւղացի երեխան ունի գաշտի, լեռան գետակի, հովտի, անտառի, հացահատիկների և նման առարկաների ու երեսյների մտապատկերներ, իսկ քաղաքում ճնշեած և մեծացած երեխան՝ յաճախ ոչ. և ընդհակառակը: Այս երեսյթը անշուշտ րոլոր գանապատներին յայտնի պիտի լինի: Այսպէս՝ Բերլինի գպրոցները նոր ընդունւող 500 աշակերտների արւած հարցումներից երեացել է, որ աշակերտութեան 82 տոկոսը ոչ մի պատկերացում չէ ունեցել արեկի մասին, իսկ 70 տոկոսը՝ արեկի մուտքի մասին. 37 տոկոս աշակերտներ չեն տեսել բնաւ ցորենի արտ, 49 տոկոսը՝ լճակ, 80 տոկոսը՝ արտոյտ, 82 տոկոսը՝ կաղնի ծառ. 37 տոկոս չեն եղել երբէք անտառում, 29 տոկոսը՝ գետափի, 52 տոկոսը՝ լեռան վրայ. 57 տոկոս աշակերտներ երբէք չեն եղել որևէ գիւղում\*)

Հետաքրքիր կիմնի անշնուշտ մեզնում ևս իրագործել այսպիսի էքսպերիմենտներ. չենք կարծում, որ գպրոց մանող երեխա-

\*) Hans Trunk, երես 7.

ները մեզնում շատ աւելի չափով և աւելի պարզ աշխարհագրական զաղափարներ ունենան:

Յամենայն դէպս պարզ է միանգամայն, որ երեխաները իրենց հետ դպրոց են բերում մեծ մասով թերի, անձիշտ ծանօթութիւններ շրջապատի մասին: Կայսնակ այն հանգամանքը, որ երեխաների ուշագրութիւնը իրենց շրջակայրում գրաւում են աչ թէ առաջնակարգ, յետագայ աշխարհագրութեան ուսուցման համար կարեոր առարկաներ և երեսյթներ, այլ յաճախ նրանցից անկարեսները, երկրորդականները:

Հայրենագիտութեան անհրաժեշտութիւնը, այսպիսով, ակընյայտ է: Մանկալարժական տեսակէտից անթոյլատրելի է, որ մեր աշակերտները իմանան հեռաւոր աշխարհամասերի ծովերը, լճերը, լեռները, հարթութիւնները, զինաւոր քաղաքները և այլն, իսկ չիմանան թէ ուր է տանում իրենց շրջակայրում գանուղինը դիմումն, ինչպէս են կոչւում մօտիկ գոնուղ լեռները, զիւղը և այն:

Այն դպրոցներում էլ, որտեղ հայրենագիտութիւն չէ աւանդում, ուսուցիչը կամայ-ակամայ, աշխարհագրութեան դասերին, դիմում է հայրենագիտութեան նիւթին, նա ստիպւած է լինում սկսել դասարանից, դպրոցից և շրջակայրից. օտար երկրների մասին խօսելիս նա ստիպւած է յաճախ օրինակներ բերել ընակալարից և սրա շրջապատից, նորին է անում նույն համեմատութիւններ անհեռու: Սակայն այս բոլորը կատարուում է թերի, պատահական կերպով, առանց որիէ ծրագրի: Հայրենագիտութիւնն է, որ կատարում է այն գործը, ինչ առաջ մասնամբ միայն և թերի կերպով կատարուում էր առանց նրան էլ Սակայն այժմ ևս նախանձելի չէ հայրենագիտութեան վիճակը մեր դըպրոցներում:

Արդ, ինչ միջոցների պիտի դիմել՝ հայրենագիտութեան ուսուցումը մեր դպրոցներում ներմուծելու ոչ միայն թղթի վրայ, այլ իրապէս. ինչպէս արժանի բարձրութեան հասցնել այս ամենակարգաներից մեջից մեջէն առաջարկաներից մէջի ուսուցումը:

Նախ և առաջ անհրաժեշտ է ուսուցման համար պահանջող անհրաժեշտ նիւթը հասարել և դասաւանդման համար նպատակայարմար կերպով մշակել: Անշուշտ սա ծանր, պատասխանատու գործ է, կարելի չէ առանց այլեալութեան մէկ դասաւուի թողնել: Այդ անելու համար անհրաժեշտ է ունենալ հիմնաւոր ծանօթութիւն ուսուցման առարկայ դարձող վայրի և նրա շրջակայրի մասին: Այդ ծանօթութիւնը չէ կարող ունենալ ամեն



մի ուսուցիչ, մանաւանդ մեր դպրոցական լուսաւութեան մէջ, երբ «ուսուցչական գաղթը» սովորական երևոյթ է, և ամեն մի ուսուցիչ սեպտեմբերին նոր պաշտօնավայր գնալով, նոր էլ պիտի սկսէ նիւթեր հաւաքել հայրենագիտութեան դասերի համար. Երբ հաւաքը նա այդ նիւթերը, երբ և ինչպէս մշակէ այն: Այս իսկ պատճառով միանգամայն նպատակայարմար է, որ ամեն մի դպրոցավայրի հայրենագիտութեան նիւթը դպրոցի ամբողջ ուսուցչական կազմի կողմից հաւաքւի և մշակւի ու գառնայ այդ վայրոցի սեփականութիւն, որպէսզի հայրենագիտութեան ամեն մի դասաւու պատրաստի գտնէ աւանդելի նիւթը: Կրկնում ենք, այդ ըանը շատ կարեոր է մանաւանդ մեր ներկայ դպրոցական իրականութեան մէջ:

Մեծ քաղաքներում, որտեղ մի քանի դպրոց կայ, այդ աշխատանքը պիտի կատարեն հայրենագիտութեան բոլոր դասաւուները միասին, կամ նրանցից ընտրւած մի յանձնաժողով:

Այդ յանձնաժողովին սակայն պիտի մասնակցեն ոչ միայն ծխական դպրոցների ուսուցիչները, որտեղ աւանդւում է հայրենագիտութիւն, այլ նաև՝ նոյն տեղի միջնակարգ դպրոցի աշխարհագրութեան ուսուցիչները. չէ որ յաճախ ծխական դըպրոցներից աշակերտները մտնում են միջնակարգ դպրոց, ուրեմն այստեղի դասաւուն ևս շահագրգուած է այդ բանում: Այդ աշխատանքին պէտք է մասնակցեն նույն պատմութեան ու քնական պատմութեան ուսուցիչները: Քանի որ առարկաների կապը հայրենագիտութեան հետ ակներեն է, Ըստհանրապէս ամեն մի դիտակ մարդու մասնակցութիւնը գործին օգուտ կրերէ: Վերջապէս ոչ հայրենագիտութեան դասաւուների մասնակցութիւնը հեռու կազմէ այդ առարկային միակրամանի բնոյթ տալուց:

Աւելորդ է ասել, թէ որ աստիճան կարեոր է այդ աշխատանքը, մեծ է նրա նշանակութիւնը: Նորեկ ուսուցիչն կմնայ միայն յաւելութեալ, բարեփոխութեան անել եղածի վրայ, մշակել նիւթը դասաւանդութեան համար:

Հայրենագիտութեան ուսուցման նպատակը երկու է 1) մասնաւոր-թանձրացեալ, 2) ընդհանուր-վերացական.

Առաջին դէպսում հայրենագիտութեան ուսուցումը նպատակագրում է ծանօթացնել հայրենի երկրի այսինքն բնակատեղի և նրա շրջակայրի հետ, հայրենագիտութեան դասերին երեխան պիտի սովորէ զիտել և պարզ պատկերացումներ կազմել բնութեան զանա զան ձևերի և երեսյթների, մարդու և բնութեան փո-

խաղարձ յարաբերութեան, ազգաբնակութեան պարզ անտեսական-հասարակական յարաբերութիւնների մասին: Երեխան պիտի սովորէ հասկանալ տեղական պայմանների առանձնայատկութիւնները, առանձին ուշադրութիւն դարձնէ իր հայրենիքի բնութեան գեղեցկութիւնների վրայ, ընդհանուր տեղեկութիւններ ձեռք բերէ հայրենիքի պատմական անցեալի մասին. այդ դէպքում միայն յիրաւի երեխան զիտակցաբար ճանաչած կլինի իր հայրենիքը, և այդ հայրենիքը կմիրէ նա:

Հայրենագիտութեան ուսուցումը միւս կողմից աչքի առաջ ունի նախապատրաստել աշակերտներին յետագայում աւանդելիք աշխարհագրութեան դասերի համար: Հայրենագիտութեան ուսուցմամբ միայն ճնարաւոր է աշակերտին նախապատրաստել և ընդունակ դարձնել իսկապէս ըմբռնելու այն գաղափարները, որ յետոյ աշխարհագրութեան դասերին պիտի իւրացւեն:

Սրանից արդէն պարզ է, թէ ինչ արժէք ունի հայրենագիտութիւնը աշխարհագրութեան ուսուցման համար: Հայրենիքը, այսպիսով, պիտի լինի ելակէտ և հիմք աշխարհագրական հիմնական գաղափարներ պարզելու համար, այլապէս՝ առանց այդ նախապատրաստական աստիճանի՝ աշխարհագրութեան ուսուցումը մեծապէս կտուժէ, շատ բան երեխաների համար կմնայ անհասկանալի, Ուստի և իրաւունք ունի հայրենագիտութեան թէորետիկներից մէկը, ասելով. «Աշխարհագրութեան այն ուսուցումը, որ չէ զիմում մանրամասն անցած հայրենագիտութեան արգիւնքների օգնութեանը, նա նուազում է մի այնպիսի գործիքի վրայ, որին պակասում են լարերը» \*).

Դասատուն ուրեմն երեք չպէտք է մոռանայ, որ հայրենագիտութեանը գլխաւորապէս մի նախապատրաստող առարկայ է: Աշխարհագրութեան ուսուցումը իր նպատակին լիովին կհամապատասխանէ միայն այն ժամանակ, երբ նրանից առաջ արդէն կանոնաւոր կերպով աւանդել է աշակերտներին հայրենագիտութիւն:

Մեծ նշանակութիւն ունի հայրենագիտութեան ուսուցումը նաև աշխարհագրական ըստիէսներ կարդալու և հասկանալու համար: Ինչպէս որ աշակերտի համար հայրենի շրջապատի ծանօթութիւնը նպաստում է հետաւոր երկրների նկարագրութիւնը հասկանալուն, այդպէս էլ հայրենիքի քարտէսի աստիճանական ժամանօթութիւնը նպաստում է ուրիշ երկրների քարտէմները հաս-

\*) Stoy: Von der Heimatkunde. (Jena, 1876);

կանութուն: Քարտէսը զանազան տեսակ նշանների և գոյների համագրութիւն (Zusammenstellung) է, որոնց նշանակութեան մասին համաձայնութեան են եկել, բայց որոնք բնաւ չեն ներկայացնում համապատասխան վայրի պատկերը: Եւ որովհետեւ աշխարհագրութեան յետագայ զանաւանդութեան ընթացքում քարտէսը գլխաւոր օժանդակ միջոցներից մէկն է, ուստի և զբանից ծագում է անհրաժեշտութիւն, որ աշակերտները սովորեն հասկանալ քարտէսների լեզուն, այսինքն՝ որ նըանք պայմանական կերպով ընտրւած նշանների և գոյների տակ աշխարհագրական որոշ առարկաներ և յարաբերութիւններ պատկերացնեն:

Հայրենագիտութեան սերտ կատալոգ գպրոցական մի քանի առարկաների հետ միանգամայն ակներեն է:

Ամենից առաջ ինարկէ յիշատակելու է աշխարհագրութիւնը, որի նախաշաւալիդն է կազմում, ժամանակակից մեթոդիկայի մըտքով, հայրենագիտութիւնը:

Հայրենի իրականութեան միջոցով աշակերտը ոչ միայն պիտի նախապատրաստէ ըմբռնելու մի շարք աշխարհագրական գաղափարներ և յարաբերութիւններ, այլ նաև պիտի սովորի դիտողութեամբ ձեռք բերածը հետզհետէ փոխադրել ուրիշ վայրեր, որ հեռու են գտնւում, աշակերտի դիտողութեան առարկայ գաւնալ չեն կարող: Այդ վայրերի թւում բնականաբար առաջին տեղը պիտի բռնէ հայրենի բնագաւառը:

Հայրենագիտութեան և իրազննութեան յարաբերութիւնը այսպէս է սահմանում Օ. Կրոնվալլը: «Մինչ իրազննութիւնը ընդհանուր-առարկայական և լեզունց ունի, հայրենագիտութիւնը պէտք է ձգտէ ծրագրւած եղանակով, որոշ մեթոդով ձեռք բերելու այնպիսի դիտողութիւններ, որոնք յատկապէս յետագոյ աշխարհագրութեան ուսուցումը նախապատրաստելու համար պէտքական են, պիտի ձգտէ դիտողութեամբ, տարրական կերպով ծանօթացներ աշակերտներին աշխարհագրական հիմնական գաղափարների և յարաբերութիւնների, աշխարհագրական լեզու նեա, նաև թէ ինչպէս պէտք է այդ գաղափարները և յարաբերութիւնները զծագրել (քարտէս) և ուրիշ նշաններով արտայատել: Այդ առարկաները այն չափով միայն պէտք է ինկատի առնւեն հայդանութիւնից յետոյ» \*):

Յիշենք նաև ընսկան պատմութիւնը և պատմութիւնը: Այդ առարկաները այն չափով միայն պէտք է ինկատի առնւեն հայ-

\*) O. Kronwald, եր. 9.

բնագիտութեան ուսուցման ընթացքում, որ չափով նրանք նըպաստում են մի որոշ աշխարհագրական առարկայ աւելի հիմնաւոր լուսաբանելու, աւելի պարզ զաղափար կազմելու (ինչպէս վարւում են առհասարակ նաև աշխարհագրութեան գասաւանդման միջոցին):

Հայրենագիտութեան դասերին ուսուցման նիւթ են դասոնում նաև շրջապատի կեանքից պատմական և քնապատմական իրողութիւններ՝ հայրենիքը ինչպէս որ կայ այնպէս ներկայացնելու և ամբողջ պատկերին կենդանի գոյներ տալու համար:

Հստ այսմ՝ հայրենի գետակի մասին խօսելիս անտես պիտի չառնել նաև նրա ափին աճող ծաղիկները, շրջակայրի անտառի մասին խօսելիս պիտի յիշատակել նաև այնտեղ ապրող կենդանիները: Մի աւերակ, մի վանք, մի պատմական այլ յիշատակարան պիտելիս պիտի պատմական յիշողութիւններ զարթեցնել, տեղական աւանդութիւններ յիշատակել:

Աշակերտների մէջ, այս միջոցներով, պիտի զարթեցնել այն գիտակցութիւնը, թէ հայրենի երկիրը այլ է եղել անցեալում, այժմ՝ այլ: Այսպիսով համեմատութեան մէջ է գրւում անցեալը ներկայի հետ: Եւ ամեն տեղ էլ աւելի կամ պակաս չափով առիթ կլինի այդ անելու համար: Անշուշտ այդ գէպքում հետու պիտի մնալ չոփազանցութեան մէջ ընկնելուց, չպիտի մոռանալ, որ հայրենագիտութեան դաս է, և ոչ թէ պատմութեան կամ քնական պատմութեան դաս: Ամենաընդհանուր գծերով միայն պիտի յիշատակել բնապատմական և պատմական իրողութիւնները, ոչ թէ նրանք պիտի լինեն նպատակ ուսուցման, այլ միջոց, աշխարհագետական գաղափարներ և յարաբերութիւններ պարզելու համար:

Հայրենագիտութիւնը որոշ կապ ունի նաև նայոց լիգի դասաւանդութեան հետ: Ի հարկէ հայրենագիտութիւնը համարեա այն չափով միայն ինկատի ունենալ կարող է մայրենի լեզուն, որ չափով որ ընդհանրապէս բոլոր առարկաները, — հետեւել, որ աշակերտները ձիշտ և մաքուր հայերէնով արտայայտեն իրենց միտքը: Բայց բացի այդ ընդհանուր կապից՝ հայրենագիտութեան դասերին, իհարկէ յարմար դիպւածում, կարելի է սովորեցնել մի ուսանաւոր, կամ ընթերցարանից կարգալ մի հատուած հայրենի շրջապատի մասին:

Սակայն երբէք չպէտք է մոռանալ, որ սա լեզուի դաս չէ. զուտ լեզուական գարգութիւնները տեղ չպիտի գտնեն այստեղ:

Հայրենագիտութիւնը որոշ կապ ունի նաև զծազրութեան ուսուցման հետ, զծազրութեան դասերին աշակերտները սովո-

րում են ուղղահայեաց, հորիզոնական, թեք գծերի մասին. այդ գասերին են պարզ զաղափար կազմում ուղիղ, բութ անկիւնների մասին և այլն. իսկ այդ բութը հարկաւոր է գալիս հայրենագիտութեան ուսուցման ընթացքում՝ յատակագծեր և քարտէսներ նկարելիս:

Անցնենք այժմ մեր առարկայի ծառալին: Բայց նախ պարզենք մեզ համար, թէ ինչ պիտի հասկանալ «հայրենիք» ասելով, որ յետոյ աւելի պարզ լինի հայրենագիտութեան բովանդակութիւնը:

Հայրենագիտութեան թէորետիկների կարծիքները տարբերում են այն մասին, թէ ինչ պէտք է հասկանալ այս գէպքում «հայրենիք» ասելով, ինչ ծաւալ պիտի ունենայ հայրենագիտութեան ուսուցումը: «Հայրենիք» բառը թարգմանութիւն է գերմաներէն \*) die Heimath բառի, որ ոռւսները սովորաբար թարգմանում են родина, բայց նաև ուշինա բառերով:

«Հայրենիք» բառի համար, ընդարձակ մտքով, ոռւսները ունեն ուշինա բառը, իսկ գերմանացիները՝ das Vaterland: Կնշանակէ՝ «հայրենիք» բառը ներկայ գէպքում պէտք է գործածել նեղ մտքով. այդ բառի փոխարէն կարելի է ասել ծննդալիայը, ընակավայրը. հէնց այս նշանակութիւնն էլ ունի գերմաներէն die Heimatի բառը: Գերմաներէն Heimathskunde բառը ոռւսները թարգմանում են րունութեանունութիւնունունութիւնունունութիւն: Ուրեմն «հայրենագիտութիւն» ասելով գերմանացիները չեն հասկանում Գերմանիայի աշխարհագրութիւնը, ոչ էլ ոռւսները՝ Ռուսասամանի աշխարհագրութիւնը: Հայրենագիտութիւն կոչւած առարկայի բովանդակութիւնը աւելի ձիշտ կարտայայտէր «ծննդավայրագիտութիւն», բայց աւելի ևս ձիշտ՝ «բնակավայրագիտութիւն» բառը. աւելի շուտ՝ վերջին բառը: Ահա պատճառը: Մինոյն դասարանի աշակերտները երբեմն ունենում են տարրեր ծննդավայրեր, իսկ նրանց բուրբի ընակավայրը նոյնն է (որտեղ գտնում է գպրոցը). իհարկէ յաճախ (մանաւանդ գիւղում) աշակերտների ծննդավայրը միենոյն ժամանակ նրանց ընակավայրն է, Ակնյայտ է, որ ուսուցման տուարկայ պիտի գտնայ ուն թէ աշակերտների ծննդավայրերը, այլ նրանց ընակավայրը:

Ուրեմն «հայրենիք» բառը մեր տուարկային վերաբերող հար-

\*) Գերմանիայում է ծագել հայրենագիտութեան զաղափարը, այնտեղ է նախ իրականացել և ծաղկել:

ցերում գործ է ածւում բնակավայր բառի մտքով, իսկ հայրենաւ գիտութիւն բառ՝ բնակավայրագիտութիւն բառի փոխարէն:

Բայց դարձեալ հարց, ի՞նչ պէտք է հասկանալ «բնակավայր» ասելով, միայն այն գիւղը կամ քաղաքը, որտեղ բնակում են աշակերտները և որտեղ գտնում է զպրոցը, թէ դրա հետ միասին նաև նրա շրջակայքը. եթէ այս՝ ի՞նչ տարածութեամբ գտաւառակ, գաւառ, նահանգ, երկրամաս հետը հաշւած. թէ դրանցից մէկն ու մէկը:

Բոլոր թէորետիկները համաձայն են մէկ կէտում. —ոչ միայն բնակատեղը, այլ նաև նրա շրջակայքը անհրաժեշտօրէն պէտք է մտնէ հայրենագիտութեան մէջ. շատերը իրաւամբ շրջակայքին աւելի նշանակութիւն են տալիս այն պատճառով, որ աշխարհագրական աւելի բազմազան գաղափարներ կարելի է իւրացնել տալ այն դիտելով:

Ոմանք այդ սահմանով էլ բաւականանում են. թէ՝ հայրենաւ գիտութեան առարկայ գառնալ կարող է միայն այն, ինչ աշակերտները անձամբ դիտել կարող են. Սակայն ուրիշները աւելի ևս, իրաւամբ, ընդարձակում են մեր առարկայի ծաւալը այն պատճառաբանութեամբ, թէ բնակատեղի շրջապակայքից թոփչը շատ մեծ է մինչև աշխարհագրութեան առարկան (պետութիւն, աշխարհամասեր): Ուստի և հայրենագիտութեան շրջանակի մէջ են մտցնում նաև գաւառը, նահանգը, երկրտմասը: Սակայն ամեն մի գաւառ կամ նահանգ վարչական միութիւն կազմելով գեռ ևս չի նշանակում, որ նաև ժիրգիբական, ազգագրական և կուլտուրական կամ ընդհանուր խօսքով աշխարհագրական միութիւն է կազմում: Ուստի և բնակատեղի շրջակայքից յետոյ իրեն աշխարհագրական միութիւն պիտի վերցնել ընազուտը (Landschaft): Բնագաւառի սահմանները վարչական-արևեստական չեն, այլ բնական. ամեն մի բնագաւառ կազմում է աշխարհագրական միութիւն: Օրինակ՝ Զանգեագուրը, Լոռին, Փամբակը, Արարանը, Կամէթիան, Դալաստանը, Սևանայ լիճը իր շրջակայքով, Շիրակը, Այրարատեան դաշտը. որանցից ամեն մէկը մի բնագաւառ է: \*) Բնագաւառի և վարչական գաւառի սահմանները կարող են տարբեր լինել. օրինակ՝ Շիրակը (բնագաւառ) երկու տարբեր (վարչական) գաւառներում (Ալէքսանդրապոլի և Կարսի) է, նոյն իսկ երկու տարբեր նահանգներում (Երևանի և Կարսի):

Երբեմն բնագաւառի և վարչական գաւառի սահմանները կա-

րող են նոյնանալ. այդ դէպում աւելի լաւ. իսկ եթէ ոչ՝ բնագաւառը պիտի դարձնել ուսուցման նիւթ. ուսուցչից է կախած արդար պէտքել պէտքական գաւառի և բնագաւառի մէջ կապ գտնել և պարզել:

Իսչն պէտք է բնագաւառի աշխարհագրութիւնը մտնէ հայրենագիտութեան մէջ—այն պատճառով, որ բնագաւառի աշխարհագրական առարկաներից և երեսյթներից շատերը նոյն են, ինչ որ բնակավայրում—բնակավայրի գիրքը, լեռները, երկրի մակերեսոյթը, բուսականութիւնը, ազգաբնակութիւնը, և այն: Թէպէտ աշակերտը չէ կարող (գոնէ ամրող) բնագաւառը գիտողութեան առարկայ գարձնել բայց նա աւելի շուտ կհասկանայ. Երբեմն երեսն էլ դժւար չի լինի շրջագայութիւնների ձեռնարկել գէտերեմն էլ դժւար չի լինի շրջագայութիւնների ձեռնարկել գէտերը պի բնագաւառի այն տեղերը, որ բնակավայրի շրջակայքից գուրս էն: Սակայն դիտել կարելի է ոչ միայն մօտիկից, այլ նաև նեռւից. մի բարձրութիւնից կարելի է դիտել ոչ միայն շրջակայք. մի բարձրութիւնից կարելի է դիտել ոչ միայն շրջակայքը, այլ նաև նեռու վայրեր: Օրինակ՝ Թիֆլիսի Սոլուակի սարից կարելի է դիտել հեռւում տարածւող կովկասեան լեռները. Արագածի լանջերից կարելի է դիտել Շիրակը և Այրարատեան գաշտը: Ուսուցիչները իրենց աշխարհաբաններին պիտի դիտել տան նաև այս եղանակս, այդ դէպում կարէք չի լինի միշտ ըուլոր վայրերը գիտելու համար անպատճառ այնտեղ երթալ: Սշակերտները բնակավայրը և նրա շրջակայքը լաւ հասկանալուց յետոյ կարող են հեշտապես մտցնել քարտէսի և բէլիքի օգնութեամբ հասկանալ բնագաւառի աշխարհագրութիւնը: Երեխանները այս աստիճանից ուրին կընտելանան աշխարհագրական պատկերացումները և գաղափարները ձեռք բերելու նաև առանց անմիջական դիտողութեան, արսուրական կերպով: Բնագաւառը այսպիսով հանդիսանում է մի տեսակ կամուրջ բնակատեղից և նրա շրջակայքից հեռու երկիրներ անցնելու համար:

Պէտք է արդեօք չնացաւառով աւարտւի հայրենագիտութեան ուսուցումը:

Մեր գլուցների Ծրագիրդ ասում է, «Յանկալի է, որ III դասարանի (գ. բաժ.) դասընթացքը (այսինքն հայրենագիտութիւնը) վերջանայ Անդրկովկասի և մերձաւոր երկիրների քարտէսի հետ ընդհանուր ծանօթութեամբ» \*):

Մենք ևս կարծում ենք, որ Անդրկովկասի (առանց սակայն հարեան եեկիրների) ընդհանուր ծանօթութեամբ պիտի աւարտւի

\*) Տես «Հայոց եկամտարք, դպր, ծրագիր», 1908 թ. եր. 52:

հայրենագիտութիւնը, — յատկասէս Անդրկովկասի արևելեան մասի ծանօթութեամբ: 4-րդ ուսումն, տարւայ ընթացքում, ինչպէս տրամադրում է նոյն Ծրագիրը, Անդրկովկասը պիտի կրկին դառնայ նիւթ աշխարհագրութեան ուսուցման: Եւ այս միանգամայն նպատակայարմար է մանկավարժական տեսակէտից: Երեխաները արդէն բաւականաչափ պատրաստած կլինին առանց անմիջական դիտողութեան ըմբռնելու աշխարհագրական գաղափարներ: Այս, ինչ 3-րդ տարում երեխաները չեն կարող ըմբռնել հայրենագիտութիւնից, պիտի աւանդել 4-րդ տարում, պակասն էլ լրացնել: Անդրկովկասից յետոյ պիտի անցնել մերձաւոր, ապա հեռաւոր երկրներին: Պէտք է աշակերտներին դիտել տալ նաև բնակավայրի երկինքը, արևի և լուսի շարժումները, նրանցից առաջ եկող փոփոխութիւնները — ինարկէ մատչելին միայն:

Պիտի ուրեմն անցնել հայրենագիտութիւնը թէ նեղ մաքով (բնակավայր և շրջակայք) և թէ լայն մտքով (բնագաւառ և Անդրկովկաս). նիւթը պիտի անցնել 3-րդ և 4-րդ բաժանմունքներում: Նիւթի ընտրութիւնը անելիս պէտք է հետևեալ տեսակէտներով առաջնորդւել:

1. Հայրենագիտութեան դասերի համար միայն այնպիսի նիւթեր պիտի ընտրել, որոնք աշակերտների մտաւոր հասկացողութեան և պատրաստութեան համապատասխան են: Պէտք է սովորեցրածը ծառայի աշակերտի մտաւոր կարողութիւնները զարգացնելու և ոչ թէ յիշողութիւնը ծանրաբեռնելու:

2. Նիւթի ընտրութիւնը անելիս ուսուցիչը պիտի բաւականանայ կարևորով: Առատ նիւթերից պիտի ընտրել այնպիսիները, որոնք յատկապէս պիտանի են և յարմար:

3. Առանձին ուշադրութիւն պիտի դարձնել այստեղ ֆիզիքական տարրի վրայ: Հայրենագիտութեան դասերի միջոցով աշակերտները պիտի ձեռք բերեն աշխարհագրական անհրաժեշտ հասկացողութիւններ, որոնք ապա հմաք պիտի կազմեն աշխարհագրութեան ուսուցման: Հայրենի երկրը մի տեսակ հայելի է ամբողջ երկրագնդի, ով չի սովորել, ինչպէս հարկն է, նայել այդ հայելու մէջ, նա գժաւը թէ կարողանայ հեռաւոր երկրների մասին հիմնաւոր հասկացողութիւն ձեռք բերել:

Ալ, Հումբուլլը ասում է, «Ամեն մի անկիւնում ընութիւնը ամբողջի մանրապատկերն է. հայրենի վայրի յարաբերութիւնների մէջ գրած են միաժամանակ ամբողջ երկրագնդի զանազան վայրերի յարաբերութիւնները»: Ամեն մի վայր բաւականաչափ նիւթ կարող է մատակարել հարենագիտութեան գասաւանդման

համար՝ հայրենի երկրի աշխարհագրական առարկաների միջոցով մի կամուրջ կառուցանելու դէպի պարզ գաղափարներ և յարաբերութիւններ:

Անշուշտ դիւրին չէ այս աշխատանքը. բայց իրրե նախապայման ընդունելով սէրը և եսանդը առարկայի վերաբերմամբ, նաև բաւարար ծանօթութիւն հայրենի երկրի մասին, — այդ դէպում ուսուցչի համար մեծ գժւարութիւն չի ներկայանայ ուսուցման համար յարմար նիւթերը ընտրել և գասաւանդման միջոցին օգտակար կրպով գործադրել:

Վերցրէք ինչ բնակավայր ուզում էք, իր շրջակայքով: Ինչքան էլ այդ վայրը ամբողջ երկրագնդի հետ համեմատած փոքր տարածութիւն բանելիս լինի, այնուամենայնիւ նա աշխարհագրութեան հիմնական գաղափարներ բաւական թւով կարող է տալ որոնք ամեն տեղ էլ նոյնն են, կամ նման:

Անշուշտ ուսուցման առարկաները ամեն տեղ ըստ ամենայնի նոյնը չեն:

Շատ բան ի հարկէ փոքր չափով գոյութիւն ունի. օրինակ՝ շոտ տեղ չկան գետեր. բայց այդ դէպում իւրաքանչիւր գետակ կամ առու ցոյց տալով կարելի է զաղափար տալ գետի մասին. ինչպէս նաև ճակ, աւազան ցոյց տալով կարելի է զաղափար տալ լճի մասին, բլուր ցոյց տալով՝ սարի մասին:

Հայրենագիտութեան ուսուցումը արդինաւոր անելու համար անհրաժեշտ է, որ բաւարար չափով շարաթական դասիր յատկացնեն այդ առարկային: Մեր գպրոցների ծրագրի համաձայն այդ առարկան պիտի անցնել երրորդ տարին. նրան յատկացւած է շարաթական 2 ժամ:

Հայրենագիտութիւնը այն առարկաներից չէ, որոնց շարաթական դասերի թիւը հաւասար պիտի լինի բոլոր վայրերի գլուրոցներում, կան այնպիսի վայրեր, որտեղ ընութիւնը հարուստ է, աշխարհագրական երկոյթները բազմազան, կարճ ասած՝ ուսման նիւթը ընդարձակ ծաւալ ունի: Այդպիսի վայրերի գպրոցներում, մեր կարծիքով, շարաթական 3 ժամ պէտք է յատկացնել այս առարկային:

Անհրաժեշտ է, որ աշխարհագրութեան ուսուցման ելակետը միշտ լինի հայրենիքը, որչափ կարելի է յաճախ համեմատութեան մէջ գնելով ուրիշ երկրների հետ: «Հայրենագիտութեան ուսու-

ցումը կարմիր թելի նման պիտի անցնէ դպրոցական ամբողջ շըրշանի միջով» \*):

### III. ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՂԱՆԱԿԸ

Նիւթի ընտրութիւնը և դասաւորումը:—Դիտողութիւնը՝ իրեն հիմք ուսուցման: Կարծիքներ: Դպրոցական շրջադայութիւններ:—Պատճառական կապ:—Օժանդակ միջոցներ:

Անագին նշանակութիւն ունի հայրենագիտութեան ուսուցման համար նիւթի նպատակայարմար ընտրութիւնը, բայց նաև՝ դասաւորումը: Որքան էլ հայրենագիտութեան սահմանները որոշ լինեն, բայց և այնպէս յաճախ, շատ վայրերում աշխարհագրական նիւթը այնքան առատ է, որ անկարելի է հայրենագիտութեան դասերին նիւթը սպառել ամբողջովին: Կնշանակէ ուսուցչի գործն է առատ նիւթից ընտրել ամենակարևորը: «Երբէք չաւանդել չափից աւելի»—այս սկզբունքը տեղին է մանաւանդ ներկայ դէպում: Դիտողութեան առարկայ պիտի դարձնել միայն այն, ինչ արժանի է յիրաւի դիտելու, իսկ այդ անել՝ լիակատար, անթերի կերպով: Այստեղ էականը ոչ թէ աշակերտներին շատ բան, այլ պարզ տեսնել և դիտել սովորեցներն է. հայրենիքի նետ ծանօթանալով երեխան պիտի կարող լինի ծանօթ վայրի պայմանների միջոցով ըմբռնել նաև անծանօթ վայրի պայմանները: Այս տեսակէտից շատ կարենը է, որ բնակավայրի շրջակայքը աւելի մանրամասն ուսուցի, որովհետև այդտեղ աւելի առիթ կայ ծանօթանալու բնութեան զանազան երևոյթների հետ: Գիւղական ուսուցիչների վիճակը այս տեսակէտից աւելի լաւ է, քան քաղաքների. քստաքների ուսուցիչները ստիպւած են լինում բնակավայրի վրայ աւելի երկար կանգ առնել, քան գիւղական ուսուցիչները:

Կարենը է նաև այն, որ դասաւուն ուսուցանելի նիւթը յարմար ժամանակի անցնէ, այսինքն՝ տարւայ որոշ եղանակների պէտք է դիտել տալ և անցնել այնպիսի նիւթեր, որ լաւագոյն կերպով անցնել կարելի է հենց այդ միջոցին: Օրինակ՝ ծիածանը ուսուցման նիւթ պիտի դարձնել հէնց այն ժամանակ, երբ աշակերտները տեսնում են կամ տեսել են. ձիւնը՝ երբ ձիւն է գալիս, և այն (Ֆինդեր): Մի ուրիշ մասնագէտ ասում է. «Ի՞նչ վերաբերում է նիւթի դասաւորութեանը՝ նա պիտի կատարի,

\*) Trunk, 25.

բնականորէն, տարւայ եղանակների երևոյթների կարգով»:  
Եթէ միենոյն աշխ. առարկայից կան մէկից աւելի օրինակներ, կարելի է դիտել տալ միայն մէկը, իսկ միւսները՝ համեմատութեան կ.չել. օրինակ՝ մէկ շուկայ ցոյց տալով գաղափար տալ շուկայի մասին, մէկ այգի (տեսակ-տեսակ) ցոյց տալով՝ այդու մասին: Մնացած նիւթերը, որոնց ուսուցումը չէ կապամը որոշ ժամանակի հետ, կարելի է թողնել այլ անդամի:

Այստեղից պարզ է, որ նիւթի դասաւորութիւնը չպէտք է լինի խիստ սիստեմատիկ կարգով—բնակավայրի շրջակայքը գիտելիս ուսուցիչը չպէտք է նախ երկը մակերեսոյթի, յետոյ ուսուցման, ապա բնակիչների վերաբերող երևոյթների վրայ ուշաղութիւն դարձնել տայ, այլ առանձին առարկաները այն կարգով պէտք է ուսուցեն, ինչ կարգով յարմար են գիտութեան համար. և այդ բանը կկատարի տարբեր կերպով: Որոշ կարգի դիտողութիւններ անելուց յետոյ միայն պէտք է դիտողութեան միջոցով ձեռքբերած նիւթը խստի, կարգաւորուի, որոշ առակէտներով և ամբողջացւի: Սակայն «սիստեմ չկայ» ասելով չպէտք է հասկանալ, թէ կարգ չկայ, թէ ուսուցիչը պատահականութեան պիտի թողնէ աւանդելի նիւթը: Ուսուցիչը իր դասերի ծրագիրը առաջնույց պիտի պատրաստած լինի: Ամեն մի դասաւու պիտի հետեւ Յիշլերի ուսուցման այս կանոնին: «Հիմք պիտի ունենալ առաջնույց պատրաստւած և զվարար մասերի ու աստիճանների բաժանած ծրագիր, որ, իհարկէ, միշտ կարելի է բարեփոխութիւնների ենթարկել»:

Ուսուցման արդիւնաւորութեան համար առաջնակարգ նշանակութիւն ունի դիտողութիւնը, որ ելակտ պիտի դառնայ ուսուցիչն համար: Խսկապէս ինքն ըստ ինքեան հասկանալի պիտի լինէր այս սկզբունքը՝ ինկատի ունենալով մեր առարկայի էութիւնը. Բայց կարենը ենք համարում շեշտել այստեղ այդ մանաւանդ նրա համար, որ ոչ միայն քաղաքների, այլ նոյնիսկ գիւղական պղբունքը, հայրենագիտական գաղափարները ճգնում են սովորեցնել արսարակա կերպով, բառերին և բացատրութիւններին, ոյժ տալով. մի բան, որ մեծ մասով ապարդիւն պիտի անցնի, ինկատի ունենալով երեխանների տարիքը և անպատճառութիւնը. նրանք նեղութիւն չեն քաշում աշակերտներին տանել գուրսութեան ծոցում, ամենազիւրին ճանապարհով հասնել ուսուցման նպատակին, աւելի լաւ է դիտողական ճանապարհով երեխաններին մէկ աշխարհագրական առարկայ հասկանալի դարձնել:

քան արտարակտ բացարութիւններով՝ քսան։ Ուսուցիչը պէտք է աւանդելի առարկաները յիրաւի ցոյց տայ աշակերտներին, դիտել աայ. աշակերտը ինքը պէտք է տեսնէ և լսէ, ինքը իր սեփական զգայարաններով ձանաչել սովորէ։

Կ. Ռիտուէլը ասում է. «Բնական մեթոդը այն է, որ երեխային ծանօթացնում է նախ և առաջ այն իրականութեան հետ, ուր նա ապրում է։ Քաղաքում լինի թէ գիտում, սարի վրայ թէ հովտում, երեխան իր առաջին աշխարհագրական ծանօթութիւնները ձեռք պիտի բերէ ոչ թէ սենեակի մէջ, քարտէսից կամ գըրքից, այլ բնութեան մէջ... այսպէս վարելով միայն աշխարհագրութեան դասաւանդման միջոցին առաջ գալիք գժւարութիւնների առաջը կանխաւ. առնել կարելի է»։

Դիստերվեզը ասում է. «Արտաքին աշխարհի մասին ծանօթիւններ ձեռք բերել կարելի է միայն արտաքին, զգայարանական գիտողութիւններով. ամենից առաջ ուրեմն՝ դիտել և ճանաչել մասնակի երեսոյթները։ Ուսուցումը պիտի նպատակազրի առաջնորդել աշակերտներին գիտելու երեսոյթները կամ յիշեցնելու արդէն գիտածը։ Որքան կարելի է՝ շատ գիտողութիւն»։

Լոկլը ասում է. «Ոչինչ չէ կարող լինել հոգու մէջ, ինչ չէ եղել արդէն զգայարանների մէջ»։ Սպիտակը քարոզում է նոյն սկզբունքը. «Շատ սւելի կարեոր է և նպատակայարմար սովորել՝ թէ ինչ է այս կամ այն իրը, քան՝ այս կամ այն բանը»։

Գէօթէն ասում է. «Ով մասնակի առարկան կիսպանի կերպով ըմբռնել կարող է, նա կարող է ըմբռնել նաև ընդհանուրը»։ Կոշանակէ՝ աշխարհագրական պատկերացումներ ձեռք բերեն ևս պիտի սկսէ զգայարանական գրգիռների միջոցով։ Գետակի, լճակի, սարի հովտի և ուրիշ զաղափարներն ևս ձեռք պիտի բերել այնպէս ինչպէս նստարանի, սեղանի, շան, կատուի և նման զաղափարները»։

Անշուշա իգէալականը այն կլինէր, որ աւանդելի բոլոր առարկաները գիտէին աշակերտները ուսուցչի անմիջական հերկայութեամբ և առաջնորդութեամբ։ Բայց, ինկատի ունենալով մասնաւանդ մեր իրականութիւնը, կարելի կլինէր մասամբ վարել վերոյիշեալ եղանակով, իսկ որոշ առարկաներ էլ կարող են աշակերտներն իրենք դիտել, առանց ուսուցչի անմիջական օգնութեան։ Անկայն այս գէպքում անհրաժեշտ պայման պիտի համարվի, որ ուսուցիչը նախապատրաստէ աշակերտներին այդ բանի համար, նա պիտի աշակերտներին կարելի է խմբերի բաժանել և սովորեն սուր գիտել, և ոչ թէ անցողակի կերպով, մակերեսոյթուն։ Ուստի պէտք է նրանց առաջնորդել, զեկավարել այս ուղղութեամբ ևս։ Աշակերտներին պիտի նախապատրաստել ըրջագայութեան միջոցին անելիք դիտողութիւնների համար, նրանց պիտի առաջուց ըրջագայութեան նպատակը։ Ուրեմն ինքն պիտի առաջուց ըրջագայութեան նպատակը։ Ուրեմն ինքնը ինչպէս դասըստ ինքեան հասկանալի է, որ ուսուցիչը ինքը, ինչպէս դասըստական պարագմունքների համար, նախապատրաստած պիտի լինի, այսինքն կանխաւ գոնէ մի անզամ առանց աշակերտների, արած լինի այդ ըրջագայութիւնը»։

Դիտեն. ուսուցիչը պէտք է աշակերտներին որոշ լինլիրնելը առաջարկէ, իրը ուղեցոյց օրինակ՝ գիտեցէք ա. փողոցի վրայ գտընւող Ն. Բ. տունը և հաղորդեցէք ինձ, թէ ինչ բան առանձնապէս ընկաւ ձեր աշքին. չափեցէք ձեր բնակարանի երկայնութիւնը և լայնութիւնը. չափեցէք այս կամ ակամ կամ դպրոցի երկայնութիւնը (քայլերով). գիտեցէք, թէ ինչ ձեւ ունի ձեան փաթիլը. Դիտեցէք ցերեկւայ երկարութիւնը՝ տարւայ զանազան եղանակներին, լուսնի ձևակին փոթորկին, անձրեկ ժամանակ, վերջագոյնը՝ լաւ եղանակին, փոթորկին, անձրեկ ժամանակ, զիտեցէք մի առարկայի ստւերի երկայնութիւնը օրւայ զանազան ժամերին և այլն\*\*)։

Անշուշա այսպիսի գասաւանդութիւնը պահանջում է ուսուցչից շատ աշխատանք, քան այն, երբ ուսուցիչը գրքերից քաղելով է ստանդում և աշակերտին էլ գասագրքի երեսները ցոյց տալիս։ Այսպիսի ուսուցումը հայրենագիտական լինել չէ կարող. այդ եղանակով երեխանները ձեռք չեն բերում գիտողութիւններ, այլ նրանց արևում են «բառեր, միայն բառեր»\*)։

Ուսուցումը գիտողական անելու համար, պարզ է, սիւթի մի մասը պէտք է աւանդել լասաւլիսից դուրս։ Ուսուցիչը իր աշակերտների հետ միասին որչափ կարելի է յաճախ պիտի ձեռնարկ զրուանըների և ըրջագայութիւնների ուսուցման նպատակով։ Այդ զբօսանքները կարելի է կատարելներ հայրենագիտութեան ժամերին, քանի որ ուսուցանելու նպատակով են կատարւում, ըրջագայութեան միջոցին ուսուցիչը պէտք է հետեւ, որ երեխանները սովորեն սուր գիտել, և ոչ թէ անցողակի կերպով, մակերեսոյթուն։ Ուստի պէտք է նրանց առաջնորդել, զեկավարել այս ուղղութեամբ ևս։ Աշակերտներին պիտի նախապատրաստել ըրջագայութեան միջոցին անելիք դիտողութիւնների համար, նրանց պիտի առաջուց ըրջագայութեան նպատակը։ Ուրեմն ինքնը ինչպէս դասըստ ինչպէս դասըստական է, որ ուսուցիչը ինքը, ինչպէս դասըստական պարագմունքների համար, նախապատրաստած պիտի լինի, այսինքն կանխաւ գոնէ մի անզամ առանց աշակերտների, արած լինի այդ ըրջագայութիւնը։

\*) Անհրաժեշտ չէ սակայն, որ տւած բոլոր հարցերին բոլոր աշակերտները պատրաստեն պատասխաններ։ Այս նպատակի համար աշակերտներին կարելի է խմբերի բաժանել և նրանցից մէս մէկին որոշ աշխատանք յանձնարարել։

\*\*) Trunk, S. 22.

Դիստերվէզը հայրենագիտութեան դասատւից պահանջում է, որ նա ոչ միայն բնակավայրը և նրա շրջակայքը, այլ և բնագաւռը տեսած լինի. սակայն ոչ թէ երկաթուղով կամ կառով ման եկած, այլ ոտքով: Ո՞րչափ մեծ տարբերութիւն կայ այդպիսի դասատւի կողմից աւանդածի, և իր նիւթը զրքերից քաղաքուուցչի աւանդածի մէջ, Միայն անձամբ տեսածը և իսկապէս ապրածը կարող է բորբոքել երեխայի ողին:

Իւրաքանչիւր շրջագայութիւն պիտի իր յատուկ նպատակը ունենայ: Սովորական զբանք չպիտի համարւեն այսպիսի շրջագայութիւնները:

Շրջագայութիւնների միջոցին ձեռք բերած նիւթը կարելի է մշակել նաև դասարանում. այստեղ ահա պիտի մի անգամ դիտած առարկաները և երեսյթները պէտք է համեմատել նախկինների հետ, նրանց պատճառի և հետևանքների վրայ ուշադրութիւն դարձնել տալ, նաև ուրեւագծել տալ:

Հայրենագիտութեան դասատուն չպէտք է բաւականանայ նրանով, որ բնակավայրի աշխարհագրական երեսյթները իւրաք յետեկց թէ, այլ նա պիտի ջանք թափէ աշակերտներին այնտեղ հասցնելու, որ նրանք ըմբռնեն այդ երեսյթների փոխազարձ կապը, —ի հարկէ որչափ հնարաւոր է: Հէնց այդ տարիքից երեխաներին պիտի (ի հարկէ, կրկնում ենք, որչափ թոյլ է տալիս նրանց մտաւոր կարողութիւնը) ցոյց տալ աշխարհագրական առարկաների և երեսյթների պատճառական կապը: Միան է ենթագրել, թէ աշխարհագրութեան համեմատական սկզբունքը ըմբռնելի է միայն բարձր դասարանների աշակերտներին, ուրեմն և տարրական դպրոցում նա տեղ չպիտի ունենայ: Ո՞չ, հէնց սկզբից պիտի գերիշխէ այդ սկզբունքը աշխարհագրութեան ուսուցման մէջ: Եւ փորձը ցոյց է տալիս, որ բնաւ դժւար չէ այդ սկզբունքով առաջնորդել հէնց սկզբից: Օրինակ՝ իւրաքանչիւր երեխայ ինքնարերաբար դիտելով գիտէ, որ դէպի հարաւ նայող արեւոտ բնակարանը տևելի էլ տաք է, այնտեղ օդը տևելի առողջարար է, քան հակառակ կողմում (հիւսիս): Երեխան շատ հեշտութեամբ հիասկանայ, որ հարաւ ընկնող պարտէզի պառւզները տևելի շուտ և աւելի լաւ են հասնում, քան հակառակ կողմում:

Եթէ երեխայի ուշագրութիւնը սկզբից դէպի այս կողմը դարձրէի, այն ժամանակ բուն աշխարհագրութիւնը սովորելիս նա հեշտութեամբ հիասկանայ, թէ ինչ մեծ նշանակութիւն ունի մի երկրի համար նրա լեռների ուղղութիւնը, որ մի լեռնաշղթայից հարաւ ընկնող երկրները այլ կլիմայ, բուսականու-

թիւն ունեն, այլ է ազգաբնակութեան կենցաղը, քան հիւսիս ընկը նող երկմներում: Գիւղացի ամեն մի երեխայ գիտէ, որ կաւահողը աւազահողը բերը չէ. նա յետոյ հեշտութեամբ կը հասկաւ ման եկած, այլ ոտքով: Ո՞րչափ մեծ տարբերութիւն կայ այդպիսի դասատւի կողմից աւանդածի, և իր նիւթը զրքերից քաղաքուուցչի աւանդածի մէջ, Միայն անձամբ տեսածը և իսկապէս ապահանձնելու մեծապէս կախած են այդ երկրի հողի յատկութիւններից:

Նպատակայարմար է հայրենագիտութիւն ուսուցանելիս, որ ուսուցիչը չտայ պատրաստի զազափարներ, այլ հարցերի օգնուուցիչը չտայ պատրաստի զազափարներ, այս երեսյթները կազմեն գաղաթեամբ այնտեղ հասցնէ, որ աշակերտները կրենք կազմեն գաղաթեարներ:

Հայրենագիտութեան ուսուցումը արդիւնաւէտ անելու համար պէտք է ունենալ և նպատակայարմար ձեռվ գործադրել անհրաժեշտ օժանդակ միջոցներ: Այս օժանդակ միջոցների նպատակը կրկնակի է: 1) նրանք դիւրացնում են բնակավայրի վերաբերմար ձեռք բերած ծանօթութիւնները ամրապնդելը. 2) նըրանցով պէտք է ցոյց տրւի, թէ ընդհանրապէս ամեն մի աշխ. առարկայ ինչ ձեռվ է պատկերացւում, որպէսպի աշակերտները հասունանան այն աստիճան՝ ճիշտ հասկանալու համար այդ ձեերի նշանակութիւնը նաև այն ժամանակ, երբ նրանք գործադրւում են իւրանց չտեսած առարկաները պատկերացնելու համար:

Հայրենագիտութեան ուսուցման համար պահանջւող օժանդակ միջոցներն են 1. դասարանի յատակագիծը. 2. դպրոցի այն դարկի ուրւագիծը, որտեղ գտնում է դասարանը. 3. դպրոցի մերձաւոր շրջապատի ուրւագիծը. 4. բնակավայրի ուրւագիծը. 5. Հայրենի երկրի կամ գոյնէ նրա մի մասի բեկլիքը. 6. բնակավայրի շրջապատի քարտէսը: 7. Մօղեններ: Սակայն յատակագիծ վայրից միջոցները կամ քարտէս գծագրելն էլ չափազանցութեան չպէտք է հասցնել. կամ քարտէս գծագրելն էլ չափազանցութեան համար անպատճէ չէ, այլ միշնդհանրապէս աշխարհագրութեան համար անպատճէ չէ, որ աշակերտներն չոց միայն: Ամենակին պէտք չէ, որ աշակերտներն արտանկարեն այն բոլորը, ինչ կգծէ ուսուցիչը: բաւական է, որ նրանք հասկանայն ժամանական դիտէնում կամ այս կամ այն առարկան (էնու, զետ, լիճ և այլն) պլանի կամ քարտէսի վրայ ինչ ձեռվ է պատկերացւում: իսկ այդ հնարաւորը է՝ առանց անպատճառ աշխարհաների գծելուն:

Միւս կողմից էլ յաձախ է պատահում, որ հէնց առաջին դաստիւթիւնը ուսուցիչը դասարանում կախ է անում յատակագիծ կամ քարտէս նրանով սկսում ուսուցումը՝ ցոյց տալով վերև և ասեղարտէս և նրանով սկսում ուսուցումը՝ ցոյց տալով վերև և ասեղարտէս որ դա հիւսիս է և այլն: Այս վերացական, մտաւոր աշխատութեամբ առանց անպատճառ աշխարհաների գծելուն:

որ քարտէսի գործածութիւնը առաջուց կատարւող վարժութիւնների միջոցով նախապատճառատիւ: Աշակերտները առաջուց պիտի իւրացնեն գծերի, գոյների և ուրիշ նշանների միտքը. շատ կառուոր է հասկացնել երեխաներին, թէ ինչ մասշտաբը, թէ ինչու և ինչ չափով ենք մենք փոքրացնում առարկան: Պէտք է սկսել դասարանում եղած զանազան առարկաների ուրւագիծը պատրաստելուց, ապա՝ դասարանի, դպրոցական շենքի, վերջը շրջակայքի ուրւագիծը պիտի պատրաստել: Նպապակայարմար է նախ ցոյց տալ երեխաներին առարկայի պատկերը, ապա տալ նրա ուրւագիծը: Նրանք գիտեն, որ ամեն մի առարկայ (բոյս, կենդանի) կարող է ունենալ մեծ կամ փոքր պատկեր: Այդ օրինակով կարելի է հասկացնել մասշտաբը և յատակագիծը:

Յատակագիծերը, մանաւանդ սկզբում, չպէտք է պատրաստի ունենալ և ցոյց աալ աշակերտներին, այլ դասաւուն ինքը աշակերտների առաջ պիտի պատրաստէ այն, որպէսզի աշակերտները տեսնեն իրենք: Այս կերպ գլուխ եղած յատակագիծը կարելի է այնուհետև կարիք եղած ժամանակ գործադրել:

Թէ արդեօք աշակերտներն իրենք էլ ամեն անզամ ուսուցչի գծադրածին նայելով պիտի գծեն, — այդ կախւած է մեծապէս տրամադրութեան տակ եղած ժամանակից. բայց ոչ մի զէտքում գծադրութեան չպէտք է գերազասութիւն տալ ի հաշիւ առարկայի ամբողջական հասկացողութեան: Պէտք է աւելի ուշադրութիւն դարձնել քարտէս կարդալու, հասկանալու վրայ, քան գծագրելու:

Հայրենագիտութեան որևէ լրասազիլը գործածելու մասին տարրեր կարծիքներ կան: Նախ ինքն ըստ ինքեան պարզ է, որ մէկ դասագիրք բոլոր վայրերի համար և համաշափ կերպով յարացրած չի կարող լինել: Ուրեմն դասագիրքը պիտի պարունակի մի որոշ բնակավայրի, նրա շրջակայքի և բնագաւառի ուսուցման նիւթը: Սակայն այս դէպքում ևս մանկավարժների մեծամասնութիւնը դէմ է դասագրքի գործածողութեան: Նախ չպէտք է անտես անել այն հանգամանքը, որ հայրենագիտողութիւնը դասաւանդում է Յըրդ ուսումն. տարում. կնշանակէ երկու տարի միայն դպրոց յաճախած երեխաներ, որոնք նոր-նոր են ազատ կարդում, պիտի սկսին դասագիրք գործածել: Մըթէ անմասաւակայարմար չէ այդ աստիճանի վրայ գտնուող երեխաների ձեռքը դասագիրք տալ:

Մանկավարժական տեսակէտից ևս անմասաւակայարմար ևմ համարում տալ աշակերտների ձեռքը մի դասագիրք: Ներկայ դէպ-

քում հարցը չէ վերաբերում գիտելիքներ ձեռք բերելուն, այլ գիտողութեան. դասագիրքը չնպաստի դրան, այլ կխանդարի: \*) Կան մանկավարժներ էլ, որոնք դասագրքի կարեորութիւնը ընդունում են: Մեր իրականութեան մէջ, զոնէ օժանդակ ձեռնարկը, գրւած միանգամայն պարզ լեզուի, կարող է թերեւ նպաստել գործին:

#### IV. ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆԵՐ

(Ստորև առաջ բերւած ծրագրի վերաբերմամբ)

Բնակավայր: — Բնակավայրի շրջակայքը: — Բնագաւառ: — Երկինքը դիտելը:

Ամեն մի բնակավայր, նայած իր դիրքին, մեծութեան և տեղական պայմաններին, բազմատեսակ նիւթ կարող է մատակարարել հայրենագիտութեան ուսուցման համար: Ո՛րքան և այդ նիւթը լինի միասնակական սակաւ, բայց և այնպէս ամենուրեք կլինեն դիտողութեան համար որոշ չափով աշխարհագրական առարկաներ: Եթելի կերպոյթեան համար և այսպէս:

Գիւղը աւելի պակաս գիւղարութիւններ կառաջացնէ ուսուցչի համար, բան քաղաքը, մանաւանդ միծ քաղաքը, որ դասաւուցից կարհանջէ մանկավարժական առանձին հմտութիւն:

Տարածւած սխալ կարծիք է, թէ հայրենագիտութեան ուսուցմամբ երեխաները, որչափ կարելի է, մանրամասնորէն պիտի ծանօթանան ընակավայր—քաղաքի հետ: Յանախ սովորեցնում են բոլոր փոլոցների անունները, քաղաքի յատակագիծը գծել են տալիս մանրամասնորէն, կարծէք թէ, ինչպէս նկատում է Տըունկը, երեխաներին կառապան դառնալու համար են նախապատրաստում:

Մըթէ իսկապէս հայրենագիտութեան գլխաւոր նպատակն է բնակատեղի մանրամասն ծանօթութիւնը: Անշնչառ ոչ բնակատեղը այստեղ սոսկ ուսուցման օրիեկտ չէ, այլ նաև, գլխաւորապէս, ուսուցման միջոց՝ աշխարհագրութեան ասուցումը նախապատրաստելու համար: Ուստի և նիւթի ընտրութիւնն անելիս անհրաժեշտաբար պիտի ինկատի առնել մանուկների մտաւոր կարողութիւնը, նրանց հետաքրքրելու աստիճանը, հայրենագիտութեան ուսուցման Փօրմալ խնդիրը:

\*) Trunk, եր. 27

Ուստի և բնաւ կարիք չկայ այստեղ մանրամասնորէն կանդ առնել, օր. քաղաքազլիխի, քաղաքային վառութես: իրաւնքների և պարտականութիւնների վրայ. 3. ուս. տարւայ երեխան անկարող է իւրացնել այդպիսի բարք հասկացողութիւններ. չէ որ պահանջւող գիտողութիւնը պակասում է այստեղ:

Այս տարիքի երեխային հետաքրքրում են՝ ընտանիքը, գըտրոցը, բնութիւնը, ինչպէս նաև անմիջապէս դիտողութեան առարկայ դարձող քաղաքային և գիւղական կեանքի որոշ պայմաններ:

Այսչափը բաւական չէ: Քանի որ, մանաւանդ միծ քաղաքներում, ուսուցման նիւթը շատ միծ է, ուստի և պէտք է անցնել միայն կարեորը. երկրորդական բաները, որ աշխարհագրական տեսակէտից չնշին նշանակութիւն ունին, մի կողմը պիտի թողնել (տ. զլ. II և III.).

Ուսուցման ընթացքը համար ական (synthetisch) է, որ կազմւում է մի շարք մասնակի դիտողութիւններից, որոնք, իրենիւթիւնիութիւններ, մէկ կամ աւելի աշխարհագրական զաղափարներ կամ նրանց յարաբերութիւնն են պարզում:

Իրեն նիւթի առաջին միութիւն պէտք է ընտրել դպրոցական շէնքը իր շրջակայքով: Թէպէտ երեխայի բնակարանը, ընտանի շրջապատը նրան աւելի մօտ է, նրա դիտողութեան համար աւելի ճատչելի, բայց ընդհանուր, ամենքի վերաբերմարք միենոյն, դիտողութեան համար ընտրել պէտք է՝ դասարանը, դպրոցի բակը և այգին:

Սակայն դպրոցական շէնքը ուսուցման նիւթ դարձնելոց առաջ պիտի դիտել տալ արեգակի շարժումը ցերեկը (արեկի ելքը, բարձր կէտը, մուտքը) և զրան կցել աշխարհի կողմերի ուսուցումը՝ կատարել տալով վարժութիւններ. նաև ստւերը դիտել տալով:

Իրեն նիւթի երկրորդ միութիւն՝ պիտի ընտրել բնակավայրի կենդրում և նրանից ենող փողոցները. Դէպէտ կենտրոնը (օրինակ՝ գիւղամէջ) տանող գիւղի գլխաւոր ճանապարհը դիտելով երեխաններին կարելի է հասկացնել նրա նշանակութիւնը, հաղորդակցութեան միջոցների պարզ տեսակները: պէտք է առիթից օգտել և հասկացնել, դիտել տալով, մի գեղեցիկ և մաքուր փողոցի նշանակութիւնը: Այստեղ եղած տները դիտելով կարելի է ցոյց տալ, թէ ինչ տարբեր ձեռվ են շինւած նրանք և տարբեր նպատակների են ծառայում, մանաւանդ՝ ինչ վերաբերում է հասարակական շէնքերին (պօստ, եկեղեցի, դատարան և այլն): «Մօ-

տիկից գէպի հեռուն սկզբունքով պիտի առաջնորդւել ընդհանրապէս նաև այս գէպքում:

Վերջին միութիւն կազմում է՝ գիւղը կամ քաղաքը իրեւ մի ամրողութիւն դիտելը: Սա ոչ այլ ինչ է, եթէ ոչ էապէս՝ մինչ այն ձեռք բերած մասնակի դիտողութիւնները ամբողջացնել, մի միութիւն կազմել: Բնակատեղի անւան ծագումը բացատրել, որէտք է՝ երբ կարեոր է, նաև պէտք է երեխանների ուշագրութիւնը դարձնել տալ, հնար եղածին չափ, պատճառի և հետևանքը մէջ եղած կապի վրայ: Այս ամբողջական դիտողութեան միջոցին պէտք է ուշագրութիւն դարձնել տալ՝ թէ բնակավայրը արգեօք գիւղ է, գիւղաքաղաք, ամրոց գործարանական քաղաք ծովափնեմյ քաղաք և այլն:

Կարելի է նաև մի քանի, մասնական հասկացողութեանը մատչելի, տեղեկութիւններ տալ բնակավայրի անցեալից: Դրա համար անշուշտ շտա տեղերում յարմար առիթներ կըներկայանան: Սակայն այդ տեղեկութիւնները պիտի արևեն շատ համաօտ կերպով: Լաւագոյնն այն կլինէր որ պատմութեան դասերին, սկզբում, երեխանները ծանօթութիւն ձեռք բերէին բնակավայրի պատմական անձեւալի և աւանդութիւնների մասին, եթէ կան, ապա թէ անցնէին ազգային պատմութեան:

Դիտել, զարգացնել, համեմատել հանաչողութիւն ձեռք բերել, գործադրել—ահա այն զիխաւոր պահանջները, որ արւում է արդիւնաւոր դասաւանդութիւնից:

Առանձին ուշագրութիւն պիտի դարձնէ դասատուն՝ մասնակի առարկանները ուշագիր կերպով դիտել տալու վրայ: Աշակերտները յաձախ կարող են անցնել մի կարեոր առարկայի մօտավ, առանց դիտելու այն: Երեխանները, մեծ մասով, նայում են, բայց չեն դիտում. նրանց դիտելն էլ լինում է շատ անցողակի: Ուստի անհրաժեշտ է անմիջական, սուր դիտողութիւն:

Դիտել տալու համար անհրաժեշտ է, որ ուսուցիչը աշակերտներին շրջագայութեան համէ: Լաւագոյնն է՝ եթէ հնար է, որ դառարանում անցնելի ամեն մի նիւթնախօրօք դիտած լինի: Դասարանական պարապմունքների ժամանակ դասատուն զիխաւոր ուշագրութիւնը պիտի դարձնէ աշխարհագրական գաղափարները պարզելու և իւրացնել տալու վրայ. դասաւանդ պիտի յետել ամեն անգամ և ստուգի, թէ արգեօք աշակերտները որևէ աշխարհագրական զաղափար արտայալելիս նրա հետ, յիշրաւի, մի կոնկրէտ առարկայ կամ երեոյթ կապում են, թէ ոչ Դուրսը դիտածների մէջ—և այդ պիտի աւելացնեն դասարանա-

կան պարապմունքների ժամանակ—աշակերտները պիտի սովորեն և գտնեն պատճառական կապը. դասարանական ուսուցումը պիտի փօրմալ նշանակութիւն ունենայ զլխաւորապէս:

Մենք արդէն նկատել են, որ աշխարհագրական դադարիաներ իւրացնել տալու համար ահազին նշանակութիւն ունի բնակատնեղի շրջակայթը: Նիւթ՝ ցանկացածին շափ միշտ կլինի ամեն մի վայրում:

Նիւթի ընտրութիւնն անելիս այստեղ պիտի առաջնորդել այդ վայրի ընական պայմաններով: Թէպէտև հնարաւոր չէ թւել այստեղ այն բոլոր աշխ, էպագափարները, որոնք իւրաքանչիւր մի դպրոցում հայրենագիտութեան դասերին ինկատի պիտի առնել, բայց և այնպէս տեւլորդ չենք համարում յիշատակել մի քանիսը.

Երկրի մակերեւոյթի կազմնութիւնը.—1. Հարթութիւն, դաշտավայր, բարձրաւանդակ: 2. Բլուր, սար (ստորոտ, լանջ, կատար), լնանաշխարհ, լեռնաշղթայ: 3. Հովիտ, ձոր, կիրճ:

Ջրերը.—1. Աղբիւր, առու, գետակ, գետ (ափերը—աջ, ձախ, վերին, միջին, ստորին հոսանք), վտակներ (զլխաւոր և երկրորդական), դելտա, ջրվէժ:—2. Աւազան, լճակ, լիճ, ծով, նաւահանգիստ:—3. Կղզի: թերակղզի, հրանդան, պարանոց:

Ի՞նքն ըստ ինքեան հստականալի է, որ ուսուցման առարկայ պիտի դարձնել վերոյիշեալից այն միայն, ինչ բնակատեղի շրջակայթում կայ և դիտողութեան առարկայ դաշնալ կարող է. մնացածը մի կողմը պիտի թողնել:

Երեխաները պիտի ճանաչեն իրենց բնակավայրը՝ որոշ, այս ինչ գետը, ըլտուրը, հովիտը և այլն դիտելով:

Բնակատեղի օրջակայքը դիտելիս ուսուցիչը պիտի օգտուի նաև հողի մշակման վերաբերեալ նիւթից. դիտելով և լսելով աշակերտը կսովորէ, թէ ինչ է բերրի և ոչ բերրի հողը, աւազոտ, ճահճային, կաւային հող, նրա ազգեցութիւնը ազգաբնակութեան անտեսական կիանքի վրայ, և այլն: Հազորդակցութեան միջոցների մասին տեղեկութիւններ տալիս ինկատի կառնեն—խճուզի, գիւղական ճանապարհ, ծառողիններ, շաւիդներ, ձիաքարշ, երկաթուղի, պօստ, նաւակ, առագաստանաւ, շոգենաւ և այլն կրկնում ենք՝ այդ բոլորից պիտի անցնել այն միայն, ինչ շրջակայթում կայ և կարելի է դիտել:

Այսպիսի դասաւանդութիւնից, վերջում, կարելի է և պէտք է հանել մի քանի աշխարհագրական բնական օրէնքներ, օրինակ՝ «գետի ակոնքը միշտ աւելի բարձր տեղ է գտնում, քան

գետաբերանը»: «գետը միշտ դէպի ցած է հոսում, սարի, կտրի այն մասում, որ դէպի արեն է դարձած, ձիւնը հալչում է աւելի շուտ, քան ստուեր եղած մասում», ևայլն:

Ուսուցման ընթացքը պիտի յարմարել միշտ տեղական պայմաններին: Թէ հրշափ տարածութիւն պիտի կազմի դիտողութեան առարկան այդ ևս կախւած է մեծապէս տեղական պայմաններից—մի տեղ ընդարձակ, ուրիշ տեղ պակաս չափով: Վերջում մասնակի դիտողութիւնները պիտի համառօտ կերպով ընդհանրացնել և ամբողջացնել:

Ուսուցման Եղանակը պիտի այստեղ ևս համապատասխանէ այն պահանջներին, ինչ որ անհրաժեշտ համարւեց բնակատեղի համար: Առաջին և զլխաւոր օժանդակ միջոցը վայրը ինքն է: Արդէն խօսք եղել է շրջագայութիւնների մասին, ամեն մի շրջագայութիւն պիտի ունենայ իր որոշ նպատակը՝ աշխ. այս կամ այն գաղափարը պիտի պարզէ:

Բնակատափ ուսումը ցոյց կտայ, թէ արդմօք աշակերտները լաւ իւրացըել են հայրենագիտութեան առաջին երկու ստիճաններում անցած նիւթը: Առաջին անգամ այստեղ աշակերտը ստիպւած պիտի լինի զլխաւորապէս քարտէսի և ուսուցչի բացատրութիւնների օգնութեամբ ձեռք բերել գաղափարներ այն պիտի վայրերի մասին, որ նա ինքը չէ տեսել, կամ շատ փոքր մասն է տեսել: Եւ բնագաւառը ամենից յարմարն է զրա համար, որովհետեւ այդ տեղ աշակերտը կհանգիպի շատ բանի, որ նրան ծանօթ է—երկրի մակերեւոյթը, կենդանիները, բոյսերը, բնակիչները և այլն: (Տես գլ. II.)

— Արեգակի օրական շարժումը. ցերեկւայ և գիշերւայ փոփոխութիւնը, ստուերի դիտողութիւնները, արեգակի տարեկան շարժումը, եղանակների փոփոխութիւնը, լուսինը և նրա փոփոխումները, հորիզոնը և այլն—այս բոլորն ևս պիտի կազմեն հայրենագիտութեան նիւթ: Սակայն այս դէպքում անշուշտ չէ առաջարկւում բացատրել վերոյիշեալ բոլոր երեսյթները, այլ դիտել ուշադիր և նպատակայարմար կերպով: Եւ քանի որ հայրենագիտութեան աւանդելի նիւթը բաւական ընդարձակ է, ուստի և գործնականի մէջ ստիպւած են գասատուները վերոյիշեալը համառօտ անցնել:

Ի՞նչ կարգով պիտի աւանդել վերոյիշեալ նիւթը: Կան երեսյթներ, որոնք դիտողութեան և ուսուցման առարկայ պիտի դառնան յարմար առիթով, օրինակ՝ արեգակի խաւարումը: Ընդհանրապէս իրեւ կանոն պիտի ընդունել, որ ամեն մի երեսյթ

պիտի այն ժամանակ ուսուցման առարկայ դառնայ, երբ ամենից յարմար է զիտել այն:

Սակայն միւս կողմից էլ աւանդելիս պիտի ինկատի ունենաւ «հեշտից դժւալը», «պարզից բարդը», «ծանօթից անձանօթը» մանկավարժական սկզբունքները:

Միքանիք երևոյթներ զիտաղը թեան առարկայ դարձնել կարելի է առանց որևէ գմբերութեան, Այսպէս արեգակը, ստեղք զիտել կարելի է դպրոցի բակում, զպրոցական մի երկու շրջադաշութեան միջոցին էլ կարելի է զիտել տալ հորիզոնը:

Բնդհակառակը առանձին և բաւական մեծ դժւարութիւններ յարուցանել կարող է երկինքը զիշելը ժամանակ զիտելու կարենութիւնը: Բացառիկ զէպքերում միայն, այն էլ զիւզում, կարելի կլինի դասարանի բոլոր աշակերտներին հաւաքել՝ զիշել ժամանակ երկինքը զիտելու համար: Բնդհանրութէս, ուրիշն, պիտի բաւականանալ այսքանով, ուսուցիչը աշակերտներին՝ զիտելու համար՝ որոշ խնդիրներ պիտի առաջարկէ, որ նրանք իրենց տաճը համաձայն այդ խնդիրների էլ զիտեն երկինքը: Եւ այսպէս այն, ինչ որ ճշգրիտ և սուր կերպով զիտել են աշակերտները, պէտք է համախմբէլ, պարզել և իւրացնել տալ:

## V. ՀԱՅՐԵՆԱԳԻՏՈՒԹԵԱՆ ԾՐԱԳԻՐ

(Ն ա խ ա զ ի ծ \*)

### I. ԲՆԱԿԱՎԱՅՐ

Ա. Մասնակի գիտութիւններ և երգագայուրի հանակայրում

1. Դպրոցական շէնքը եւ նրա շրջակայրը:—

ա) Արեգակի օրական շարժումը զիտելով պարզել երկրի սկզբում զիտաւոր, ապա երկրորդական կողմերը

բ) Դասարան. Դասարանի պատերի տեղը և զիրքը՝ համաձայն երկրի կողմերի, դռան, վառարանի: Դասարանի երկայնութիւնը և լայնութիւնը չափել և հաշեել: Համեմատել դասարանի մեծութիւնը միւս դասարանների մեծութեան հետ: Գծել դասարանի յատակագիծը, այնտեղ եղած առարկաների յատակագծերի հետ:

գ) Դպրոցի դասարանի տեղը զպրոցական շէնքի մէջ: հարեւան դասարաններ և այլ սենեակներ: Դպրոցական շէնքը համեմատել մի տան (բնակւելու) շէնքի հետ: Գծել այն յարել յատակագիծը, որտեղ գտնուում է դասարանը:

\*) Տրուպա-ի աշխատութիւնը:

դ) Ինչպէս է երկիրը ամեն օր արեգակից ջերմութիւն և լոյս ստանում: Նկարագրել գարնանտյին մի արեստ օր:

ե) Դպրոցի բարերը, ձեր, ցանկապատը, մեծութիւն, նը, բակում եղած առարկաները, տարածութիւնը: Բակում եղած առարկաների ստեղները զիտել օրույ զանազան ժամերին:

զ) Դպրոցի պարտ է զը. նրա դիրքը, ցանկապատը, մեծութիւնը, նշանակութիւնը: (Երբեք ամբողջացում կարելի է զիտել ուրիշ այզիներ: Այզիների զանազան տեսակները՝ խաղողի այզի, այլ պաղատու ծառերի այզի, և այլն): Գծել զպրոցական գետնի յատակագիծը:

2. Դպրոցի մօտ եղած փողոցները եւ ճանապարհը դէպի ընակալվայրի կենտրոնը (շուկայ, զիւղամէջ և այլն):

ա) Փողոցների և բնակավայրի կենտրոն տանող ճանապարհի ուղղութիւնը, երկայնութիւնը, տեսակը:

բ) Ամենանշանաւոր շէնքերը յիշած փողոցների և ճանապարհի վրայ):

գ) Հաղորդակցութեան միջոցներ:

դ) Ճանապարհի և շրջակայ փողոցների ուրւագիծը:

3. Շուկան կամ զիւղամէջը \*) (բնակավայրի կենտրոնը):

ա) Նրա դիրքը, սահմանները, մեծութիւնը:

բ) Նշանաւոր շէնքերը, եկեղեցի, արձաններ, աղբեւրներ և այլն:

շ) Շուկայի նշանակութիւնը քաղաքի և զիւղի համար (կիրակնօրեայ և տարեկան տօնավաճառներ, եթէ լինում են, և նրանց նշանակութիւնը):

դ) Շուկայ ենող փողոցները:—Մերձակայ մեծ (քաղաքներում) շուկայի և նրանից գուրս եկող փողոցների ուրւագիծը:

4. Բնակալվայրի մօտ եղած ծովը, լիճը, զիտակը, զիտը, (եթէ կան):

ա) Պարզել թէ ինչ են ծովը, լիճը, լճակը, գետը և գետակը:

բ) Ավել, (ուղղաձիգ և թեք ափ), կամուրջ, նաւահանգիստ (եթէ բնակավայրում կայ):

շ) Գետի հոսանքի ուղղութիւնը (վերև, ներքև): Հաղորդակցութիւն զիտի վրայ:

5. Երկաթուղու կայարան \*\*):

Բ. Բնակավայրը իւրեւ ամբողջութիւն.

\*) Եթէ զպրոցը և զիւղամէջը միաժամանակ կազմում են բնակավայրի կենտրոնը, —ինչպէս որ է սովորաբար զիւղերում, —այն ժամանակ 1. և 3. կէտերը նոյնանում են:

\*\*) Եթէ ուսուցման առարկայ դարձող բնակավայրը չունի երկաթուղու կայարան, այդ դէպքում թողնում: այսպէս նաև ուրիշ դէպքերում:

1. Դիտել ամբողջ ընակավայրը որևէ տեղից, օրինակ՝ մօտակայ բարձրութիւնից: Բնակավայրի դիրքը և նրա դերը այդ տեղի զարգացման և նշանակութեան հսմար: Բացատրել բնակավայրի անւան ծագումը, եթէ դրանով տեղի պատմական կամ կուլտուրական աշխարհագրական մոմենտները աւելի են պարզում: Տեղեկութիւններ բնակավայրի պատմութիւնից և աւանդութիւններից:

3. Ծրջագայութիւնները բնակավայրում զանազան ուղղութեամբ. գծել ճանապարհները՝ բնակավայրի ուրւագծի վրայ:

3. Բնակիչները բնակավայրի. Նրանց թիւը, զանազան աղջութիւններ, կրօններ և զբաղմունքներ: Մնունդի գլխաւոր աղբերները:

4. Ի՞նչ նշանաւոր ճասարակական և վարչական հաստատութիւններ, կանոնադրութեամբ պահպանվող կամ գիւղական վարչութիւն, դատարան, թանգարան և այլն, (սակայն առանց մանրամասնութիւնների մէջ ընկնելու). դորք:

## II. ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՇՐՋԱԿԱՑՔԸ

Ա. Մասնակի դիտողութիւններ եւ օրջագայութիւններ բնակավայրի օրջակայքում:

1. Խճուղի կամ մի ուրիշ նշանաւոր հաղորդակցական ճանապարհ, որ բնակավայրից տանում է դեպի շըջակայքը: Այդ ճանապարհի նշանակութիւնը: Համեմատել մի սովորական գիւղական ճանապարհի, և արահետի հետ: Ճանապարհի վրայ գտնող բնակութիւնները: Քաղաքի և գիւղի տարբերութիւնը: Դիտածը ուրւագծել:

2. Ծրջագայութեան միջոցին այցելած ը ա ը ձ ը ո ւ թիւնները: Սար, նրա ստորոտը, կատարը և լանջերը: Լեռնաշղթայ: Հովիտ: հարթութիւն: Լեռնաշխարհ, ցածրութիւններ: Բարձրաւանդակ, գալատավայր, հարթութիւն \*). շարունակել ուրւագծելը:

3. Ծրջակայքի նշանաւոր ջրերը.—Կանգնած և հոսող ջուրը: Դիտի հոսանքը, գետի դիրքը, ափերը, ուղղութիւնը: Գետ և վտակներ, գետաբերան, ակունք: Աղբիւր: Կղզի, թերակղզի:

\*) Յետագայ շրջագայութիւնների ժամանակ ձեռք բերած աշխարհագրական նորանոր հիմնական պատկերացումները աւելանում են և պարզում:

Գետը յարմանը է նաւազնացութեան համար: նշանակութիւնը առետրի և հաղորդակցութեան համար: Գետի հոսանքի վերին և ստորին կողմերում գտնող տեղերի դիրքը: Ծրջակայքի ջրերի մէջ և մծութերը գտնուղ նշանաւոր կենդանիները և բոյսերը: Գետմէջ և մծութերը գտնուղ նշանաւոր կենդանիները: Առուներ և ջրանցքներ:

4. Դաշտերը և նրանց զանազանակերպ պտղաբերութիւնը և մշակումը: Արտեր և արօտատեղիներ: սկահող, աւազանը և մշակումը: Արտեր և արօտների գլխաւոր կենդանիները և բոյսերը: Դաշտը տարւայ զանազան եղանակներին:

5. Եղանակի պահպանը գովոխումները—արև օր, անձրի, թեան վրայ: Դիտել եղանակի գովոխումները—արև օր, անձրի, մառախուղ, ամպ, ցող, եղեամ, ձիւն, կարկուտ, բանջարաբսուկ: մառախուղ, ամպ, ցող, եղեամ, ձիւն, կարկուտ, բանջարաբսուկ: մառախուղ, ամպ, ցող, եղեամ, ձիւն, կարկուտ, բանջարաբսուկ: Եթիէ այս բոլորը իրազերնութեան վասերին անցել են՝ բաց թողնել:

6. Գիւղական տնտեսութիւնն աղջամուկ կեանքը: Գիւղամուկը կամ աղջամուկը կեանքը: Գիւղամուկը աղջամուկը կամ աղջամուկը կեանքը: Գիւղամուկը աղջամուկը կամ աղջամուկը կեանքը:

7. Բնակավայրի անտառը: Սաղարթաւոր և փշատերեկ անտառի ծաղիկները: հատապտուղներ և սունկերը: Ենամատառ անտառի ծաղիկները: հատապտուղները աշխատանքները (փայտահատուտառի կենդանիները: Անտառի ջրերը: Անտառի օգուտը: Սաղարթաւոր և փշատերեկ ծառերի տարբերութիւնը:

8. Լուսինը և նրա ձեափոխութիւնները (Փաղ): Յարմար գիւղւածին դիտել լուսնի կամ արեգակի խաւարումը: Աստղի երկինքը: Աչքի ընկնող աստղերը.

Թ. Բնակավայրի, իր ամողջաւեան, օրջակայքը

Հետպհետէ պատրաստած ուրւագծի (Skizze), օգնութեամբ պէտք է արդէն մասնակի դիտողութիւններով ձեռք բերած արդիւնքները կարգաւորել, կապակցել:

1. Բնակավայրի շրջապատի մակերեւոյթի կազմութիւնը, կապակցելով, նկարագրել: Այդ անելիս պիտի սկսել մակերեւոյթի այն կազմից, որ բնագաւառի էութիւնն (Kern) է կազմում:

\*) Արեգակի տարեկան շարժումը դիտում են աշակերտները ամբողջ տարւայ ընթացքում—արեգակը ծագելիս և մայր մասնելիս, ճաշի ժամանակ. ցերեկւայ երկարելը և կարձանալը, տաքութեան աւելանալը և պակասելը, տարւայ եղանակների նկարագութիւնը:

2. Զ բ ե ր ը և ն ր ա ն ց ն շ ա ն ա կ ու թ ի ւ ն ը ե ր կ ր ի ու ն ր ա ը ն ա -  
կ ի չ ն ե ր ի հ ա մ ա ր :

3. Մ ա կ ե ր ե ռ յ թ ի կ ա զ մ ո ւ թ ե ա ն ն շ ա ն ա կ ո ւ թ ի ւ ն ը : Ո ՞ր -  
տ ե ղ ե ն ա ա ր տ ե ր ը , խ ո պ ա ն դ ա շ տ ե ր ը , ա ն տ ա ո ւ ր , ո ՞ր ա ե ղ ե ն ա ա ւ -  
զ ո ւ ա ն ե ր ը և ա յ լ ն :

4. Բ ն ա կ ի չ ն ե ր ը .

ա) ա զ գ ո ւ թ ի ւ ն ե ր , կ ր օ ն ն ե ր .

բ) բ ն ա կ ի չ ն ե ր ի ս կ ո ւ ն դ ի մ ի ջ ո յ ն ե ր ը .

գ) շ ը շ ա կ ա յ ք ո ւ մ գ տ ն ւ ա ծ ա մ ե ն ա զ լ ի ս ա ւ ո ր բ ն ա կ ա վ ա յ ր ե ր ը ,  
ն ր ա ն ց դ ի ր ք ը , մ ե ծ ո ւ թ ի ւ ն ը , ն շ ա ն ա կ ո ւ թ ի ւ ն ը (ա մ ր ո ց , ա ւ ե ր ա կ ).  
պ ա ս ա մ ո ւ թ ի ւ ն ի ց և ա ւ ա ն դ ո ւ թ ի ւ ն ն ե ր ի ց :

5. Հ ա զ ո ր դ ա կ ց ո ւ թ ե ա ն մ ի ջ ո յ ն ե ր : Խ ճ ո ւ զ ի ն ե ր ,  
հ ա ս ա ր ա կ ճ ա ն ս ա պ ա ր հ ա ր ի ն ե ր , ե ր կ ա թ ո ւ լ ի ն ե ր , ո ր ո ն ք գ ո ւ ր ո ւ ե ն ա զ -  
մ ը բ ն ա կ ա վ ա յ ր ի ց : Շ ը շ ա գ ա յ ո ւ թ ի ւ ն ն ե ր ա ն ե լ և ճ ա ն ս ա պ ա ր հ ի տ ե -  
զ ը ո ր շ ե լ ք ա ր տ է ս ի վ ր ա յ :

### III Բ Ն Ա Գ Ա Ա Ա Ր

Հ ա յ ր ե ն ա զ ի տ ո ւ թ ե ա ն ո ւ ս ո ւ ց մ ա ն ա յ ս ա ս տ ի մ ա ն ի գ լ ի ս ա ւ ո ր  
ն պ ա ս տ ա կ ը դ ե ռ և ս հ ա յ ր ե ն ի ն ա հ ա ն գ ի մ ա ն ր ա մ ա ս ն ծ ա ն օ թ ո ւ -  
թ ի ւ ն ը չ է , ա յ լ ա շ խ ա ր հ ա պ ր ա կ ա ն պ ա տ կ ե ր ա ց ո ւ մ ն ե ր ի բ ա զ մ ա ց ո ւ -  
մ ը և պ ա ր զ ո ւ մ ը , ն ա և ք ա ր տ է ս ի լ ե զ ո ւ ն ի ր ա կ ա ն ո ւ թ ի ւ ն փ ո խ ա -  
գ ր ե լ ո ւ , ա յ ս ի ն ք ն ն շ ա ն ն ե ր ի և գ ո յ ն ե ր ի հ ե տ կ ո ն կ լ ե տ պ ա տ կ ե ր ա -  
ց ո ւ մ ն ե ր կ ա պ ե լ ո ւ բ ն դ ո ւ ն ա կ ո ւ թ ե ա ն բ ա ր ձ ր ա ց ո ւ մ ը :

1. Մ ա կ ե ր ե ո յ թ ի կ ա զ մ ո ւ թ ի ւ ն ը՝ ը ն դ հ ա ն ո ւ ր գ ծ ե ր ո վ .  
2. ա) ի ՞ ն չ կ ա պ կ ա յ ե ր կ ր ի մ ա կ ե ր ե ո յ թ ի և գ ե տ ե ր ի ո ւ լ -  
դ ո ւ թ ի ւ ն ն ե ր ի մ է ջ :

բ) Կ ա ն գ ն ա ծ ջ ր ե ր ,

գ) Զ ր ե ր ի ն շ ա ն ա կ ո ւ թ ի ւ ն ը :

3. Հ ո ղ ի յ ա տ կ ո ւ թ ի ւ ն ը և ն շ ա ն ա կ ո ւ թ ի ւ ն ը . ա մ ե ն ա ն շ ա ն ա ւ ո ր  
ա ր տ ա զ ր ո ւ թ ի ւ ն ն ե ր :

4. Գ լ ի ս ա ւ ո ր ճ ա ն ս ա պ ա ր հ ա ր ը . ճ ա ն ս ա պ ա ր հ ո ր դ ա կ ա ն ի խ ն ե ր -  
ն ե ր ո ւ ս ա ծ վ ա յ ր ե ր ի շ ը ա ն ո ւ մ :

5. Բ ն ա կ ի չ ն ե ր ի զ բ ա զ մ ո ւ ն ք ը , ն ր ա ն ց թ ի ւ ն ը . ա զ գ ո ւ թ ի ւ ն ն ե ր  
և կ ր օ ն ն ե ր :

6. Բ ն ա զ ա ւ ա ո ր ի ր ը մ ի մ ա ս կ ո վ կ ա ս ի : Տ ե ղ ե կ ո ւ թ ի ւ ն ն ե ր  
բ ն ա զ ա ւ ա ի պ ա տ մ ա կ ա ն ա ն ց ե ա լ ի ց (ի ն չ պ է ս մ ի ա ց ա ւ ո ւ ս ա ց պ ե -  
տ ա մ ա ն ) ֆ ի ր ք ը , ս ա հ մ ա ն ն ե ր ը , մ ե ծ ո ւ թ ի ւ ն ը :



Հ ա յ ա ս տ ա կ ի Ս զ գ ա յ ի գ ր ա յ ա ր ա ն



NL0438061

ԼՈՅԱ ԵՆ ՏԵՍԵԼ

ԱՐՑՈՅԻ ԱՅԵՂԵԱՆԻ

## ԱՅԽԱՐՀԱԳՐՈՒԹԵԱՆ

Դ Ա Ռ Ա Գ Բ Ք Ը Ը Ը

Մասն. ա.—4-րդ և մասամբ 3-րդ ուս. տարւայ գասընթաց; 2-րդ  
տպագրութեան, բարեփոխած և ճոխացրած. բաղմաթիւ նը-  
կարներով; Գինն է՝ 60 կոպ.

Մասն. բ.—Ասիա, Աֆրիկա, Ամերիկա և Աւստրալիա. 5-րդ տար-  
ւայ գասընթաց; Բազմաթիւ նկարներով; Գինն է՝ 65 կոպ.

Մասն. գ.—Եւրոպա. 6-րդ տարւայ գասընթաց (պատրաստ է  
տպագրութեան համար);

ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԶՐՈՅՑՆԵՐ (պատկերազարդ):

(Դասարանական և տնային ընթերցան. համար)


№ 1. Հրաբուխ, երկրաշարժ, Հեյզեր.—20 կոպ.

№ 2. Ջիւնապատ լեռներ.—20 կոպ:

ՈՒՂՂԱԳՐԱԿԱՆ ԲԱՐԳՐԲՈՅԿ

Գարունակում է. 1) մօտ 10,000 բառերի ցանկ. 2) Ուղղագրական  
կանոններ: Օժանդակ ձեռնարկ հայ լեզվի ուղղագրութիւնը սո-  
վորելու համար: 191 երես. գինը՝ 20 կոպ:

Դիմել հեղինակին Թիֆլիս, Ներսիսեան դպրոց:



21038

